




ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

2011



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵՂԵԿԱՏՈՒՆ ԿԱՐԶՈՒԹԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

■ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	1
■ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՉԵՌՆԱՐԿՆԵՐ	2-13
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԶՕՐ ԳՈՐԾՕՆ՝ ՑԱՄԱՔԱՄԱՍԷ ՑԱՄԱՔԱՄԱՍ «ԱՆԻ» ՊԱՐԱԽՈՒՄՔԻՆ ՓԱՅԼՈՒՆ ԵԼՈՅԹԸ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ «ՆՈՒՌ» ՓԱՌԱՏՕՆԸ «ՆԱՅԻՐԻ» ՊԱՐԻ ԱՆՍԱՄՊԼԸ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԱՆՆԱԽԵՆԹԱՑ ԱՄԻՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ ՊԱՐ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐ ԹԱՏՐՈՆ ԳԵՂԱՐՈՒԷՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐ ԳԵՂԱՐՈՒԷՍՏ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱԻԱՔ (ՖՈՐՈՒՄ)	
■ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԱՌՈՅՑՆԵՐ	14-24
ՄԵԼԱՆՔԹՈՆ ԵՒ ՀԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ԾԵՄԱՐԱՆ (ՅԱՏՈՒԿ ԶԵԿՈՅՑ) «ՍՓԻՒՔԻ ԼԱԻԱԳՈՅՆ ԿՐԹՕՃԱԽ»Ը՝ ԴԵՊԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ	
■ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԱՐԽԻՒՆԵՐ	25-26
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԲԱԶՄԱՇԵՐՏ ԱՐԽԻՒՆԵՐՈՒՆ ՄԷՋ՝ ԾԵՄԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ...	
■ ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ ՀԱՐՑ	27-28
«Ո՞Վ Է ՀԱՅԸ...»	
■ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԻՄՆԱԳՐԱՄՆԵՐ	29
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԻՄՆԱԳՐԱՄՆԵՐՈՒ ԿԱՌՈՅՑ	
■ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ	30
■ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԱՌՈՅՑ	31
■ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	32

Խմբագիր. Լուսիկ Կիլոյեան-Սրապեան
Ձեռագծում. Եռնիսես
Էջադրում. Անի Փեղիվանեան-Սարգիսեան
Տպագրություն. Համազգայինի «Վահե Սեթեան» հրատարակչատուն

ՄԵՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ

Համազգայինը այն կազմակերպություններն է, որոնք կը գործեն ժրաջան կերպով՝ առանց ուռուցիկ քարոզչական նախաձեռնություններու: Թերթեցէք այս տեղեկատուն եւ պիտի անդրադառնաք, որ մշակոյթի եւ կրթութեան մարզերուն մէջ 2011-ի ընթացքին կատարուած է հսկայական աշխատանք:

Մշակութային այս լայնածաւալ գործունէութեան արտայայտութիւնն են շարժապատկերի փառատօները, պարաֆսմբային ելոյթները, թատերական ներկայացումները, գրական գիտաժողովները, համագումարները, դասախօսութիւնները, երաժշտական երեկոները, գեղարուեստի ցուցադրութիւնները ...: Կատարուած է նաեւ բեղուն հրատարակչական աշխատանք եւ անխափան կերպով շարունակած է լոյս տեսնել «Բագին» գրական պարբերաթերթը: Կրթական մարզէն ներս լաւագոյն արդիւնքներով իրենց դաստիարակիչ աշխատանքը շարունակած են Պէյրութի, Մարսէյի եւ Սիտնիի ճեմարանները: Աշխուժ կերպով գործած են նաեւ Համազգայինի գեղարուեստի դպրոցները:

Համազգայինի գործունէութիւնը կը տարածուի Պուլէնոս Այրեսէն մինչեւ Սիտնի, անցնելով Ամերիկայէն, Քանատայէն, Եւրոպայէն, Սիջին Արեւելքէն եւ Հայաստանէն:

Մեր տարեկան այս հրատարակութեան մէջ կ'անդրադառնանք նաեւ Համազգայինի Հիմնադրամներու Կառոյցին: Հիմնադրամները անհրաժեշտ են՝ Համազգայինի գործունէութեան թափը պահպանելու եւ աշխատանքները աւելի եւս ընդարձակելու համար: Արդէն վերականգնած ենք Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն ստիպողաբար գործածուած բոլոր հիմնադրամները: Նաեւ կազմած ենք հիմնադրամները յանձնանձող Համազգայինի Հիմնադրամներու Կառոյցի Մարմինը: Կարելոր կը նկատենք այս կառոյցը նոր հիմնադրամներով օժտելը եւ գոյութիւն ունեցող հիմնադրամները աւելի հարստացնելը:

Մեր տարեկան տեղեկատուները պիտի արծարծեն ազգային-մշակութային տարբեր խնդիրներ, առաջադրելով տուեալ նիւթերուն շուրջ հրապարակային քննարկումներու զարգացումը: Մեր այս հրատարակութեան նիւթն է՝ «Ո՞վ է հայը» գոյութենական այժմեական հարցը:

Մեր տեղեկատուները լոյս պիտի տեսնեն տարեկան հերթականութեամբ՝ հանրութիւնը Համազգայինի գործունէութեան իրազեկ պահելու եւ փոխադարձ կապերը ամրապնդելու նպատակով:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԶՕԲ ԳՈՐԾՕՆ՝ ՅԱՄԱՔԱՄԱՍԷ ՅԱՄԱՔԱՄԱՍ (2011 ՏԱՐԻՆ)

Դժուար է քանի մը էջերու մէջ կազմել աշխարհի չորս ծագերուն Համազգայինի բոլոր կառոյցներուն, մասնաճիւղերուն եւ միաւորներուն բազմաճիւղ գործունէութեան ամբողջական պատկերը: Այստեղ կը փորձենք ներկայացնել 2011-ի ընթացքին տեղի ունեցած յատկանշական ձեռնարկները, գիտակցելով անխուսափելի բացթողումներու:

Մեր հրատարակութիւններուն մէջ պարբերաբար կ'առանձնացնենք եւ մանրամասնօրէն կը ներկայացնենք ուշագրաւ իրադարձութիւններ՝ Համազգայինով ստեղծուած մշակութային եռուն մթնոլորտին կենդանի պատկերը փոխանցելու միտումով:

Ձեռնարկները դասաւորուած են տարբեր վերնագիրներու տակ, ժամանակագրական կարգով:

Համազգայինի միաւորներն ու խումբերը նշուած են ցցուն տառերով:



Համազգայինի կազմակերպական միաւորներուն 2011-ի բեղուն ձեռնարկներուն շարքին գերակշիռ գործունէութիւն արձանագրած են Սուրիոյ մասնաճիւղերը եւ սուրիահայ գաղութը: Այսօր, դժբախտաբար Սուրիոյ հայութիւնը կը դիմագրաւէ ապահովական եւ քաղաքացիական ծանր տագնապ մը, որ կը ջլատէ անոր կազմակերպական կեանքը եւ մշակութային գործունէութիւնը ընդհանրապէս: Կը մաղթենք, որ այս դժուար ժամանակները շուտով անցնին եւ համայնքը վերագտնէ իր բնականոն կեանքն ու մշակութային աշխուժ եռանդը:

«ԱՆԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ ՓԱՅԼՈՒՆ ԵԼՈՅԹԸ ՆՈՒԻՐՈՒՎԾ՝ ՆՈՐԱՅՐ ՄԵՅՐԱԲԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 70-ԱՄԵԱԿԻՆ

Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի «Անի» պարախումբը իր 37-րդ տարեկան ելոյթը վայելչագեղ կատարումներով նուիրեց հայրենի պարադորող եւ պարուսոյց Նորայր Մեհրաբեանի ծննդեան 70-ամեակին:

Պարի աւելի քան 1000 սիրահարներ Կլենտոյլի Երկրորդական վարժարանին սրահին մէջ վայելեցին 22 պարերէ բաղկացած յայտագիր մը, որ գլխաւորաբար կը բաղկանար պալէի վարպետ Նորայր Մեհրաբեանի պարադորած գործերէն: Ելոյթին ընթացքին Գրիգոր Օկարեան իմաստալից բանաստեղծութիւններու հիւսուածքով մէջընդմէջ ներկայացուց իւրաքանչիւր պարի միտքն ու ոգին:

Ընդունուած չափանիշներով պարի ելոյթին նոր ուղղութիւն տալով՝ Լորի Թաթուլեան բեմին վրայ տեղադրուած էլեկտրոնային պաստառի մը միջոցով հարցազրոյց մը վարեց ներկաներուն հետ: Մշակութային կեանքի վերաբերող հարցումներ կը գրուէին պաստառին վրայ եւ հանդիսատեսները բջիջային հեռաձայններով կը քուէարկէին կամ երկտողերով կը պատասխանէին անոնց: Արդիւնքը կ'արձանագրուէր պաստառին վրայ: Ելոյթին աւարտին հարցախոյզը ապացուցեց, թէ ներկաներուն մեծամասնութիւնը կ'անկնկալէր մշակութային որակաւոր իրադարձութիւններ:



Պարարուեստի մէջ իր յարատեւ ներդրումներով ճանչցուած «Անի» պարախումբը Միացեալ Նահանգներու հայկական գլխաւոր պարախումբերէն է: Տարիներէ ի վեր անոր գեղարուեստական ղեկավարներն ու պարադորողներն են Եղիա Հաշուեան եւ Սիւզի Բարսեղեան-Դարբինեան: Պարախումբը առիթ ունեցած է գործակցելու Հայաստանէն հրաւիրուած հռչակաւոր պարադորողներու հետ, ինչպէս՝ առասպելի կարգ անցած Վանուշ Խանամիրեան եւ Նորայր Մեհրաբեան:

Հայաստանի պետական «Բարեկամութիւն» պարի անսամպլի հիմնադիր եւ գեղարուեստական ղեկավար Նորայր Մեհրաբեան 1994-էն ի վեր աշխատած է «Անի» պարախումբին հետ՝ զայն առաջնորդելով դէպի բարձրորակ կատարումներ: Այնուհետեւ պարախումբը միշտ ալ վայելած է ջերմ կապ մը անոր հետ: Մեհրաբեան «Անի» պարախումբին համար պարադորած է բազմաթիւ պարեր, որոնց շարքին՝ «Լոռեցի Սագօ», «Տըլէ եաման», «Սիրեցի, եարս տարան»: Իր ստեղծագործական տաղանդը պարախումբին ի սպաս ղնելու կողքին՝ Մեհրաբեան բազմաթիւ առիթներով յայտարարած է, թէ «Անի» ն կը նկատէ արտասահմանի մէջ իր որդեգրած պարախումբը:

Իր կազմաւորումէն ի վեր «Անի» պարախումբը ունեցած է շուրջ երկու հարիւր ելոյթներ: Խումբը յանձնառու է ստեղծագործական գերազանց մակարդակի նուաճումին, պարողներու նոր սերունդներու կազմաւորումին, աւանդական եւ ժամանակակից պարերու հարուստ պարացանկի մը տարածումին, ինչպէս նաեւ՝ հայկական պարերու կախարդանքով հմայելու նրբաճաշակ հանդիսատեսները:



ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ «ՆՈՒՌ» ՓԱՌԱՏՕՆԸ

ՀՈՉԱԿԱՒՈՐ ԱՍՏՂԵՐՈՎ ԵՒ ՄՊԱՈԱԾ ՏՈՄՍԵՐՈՎ ՓԱՌԱՇՈՒՔ ՁԵՌՆԱՐԿ ՄԸ

Համազգայինի Թորոնթոյի մասնաճիղին ծնունդ առած շարժապատկերի «Նուր» տարեկան փառատոնը եզակի իրադարձություն մըն է, որ լուսարձակի տակ կ'առնէ հայ արուեստագետներու կողմէ պատրաստուած կամ հայկական բնաբաններ զարգացնող ժապաւեններ:

Վեցերորդ «Նուր»ը.

Իր քաղցրահամ անունին պէս թարմ եւ բեղուն 6-րդ փառատոնը կ'ընդգրկէր 37 ժապաւեններ՝ 14 երկիրներէ:



«Նուր»ի ախորժաբեր շարքին մաս կը կազմէին միտքը գրգռող վաւերագրական ժապաւեններ, կարճ եւ երկար ժապաւեններ, ինչպէս նաեւ՝ 8 ժապաւեններ, որոնք առաջին անգամ կը ցուցադրուէին:

Փառատոնը գլխաւորաբար Մեծ Եղեռնի արձագանգներուն եւ Պոլսոյ վրայ կեդրոնացած իր բնաբաններով խոր տպաւորութիւն գործեց՝ խթանելով աշխուժ բննարկումներ:

«Աւելի քան 200 ժապաւեններ ներկայացուցան մեզի, եւ դժուար եղաւ այս տարուան յայտագիրին համար ընտրել միայն 37 հրաշալի ժապաւեններ», կ'ըսէ «Նուր» փառատոնին

Հաղորդակցութեան եւ առեւտրական բաժնի տնօրէն Ճէյքըյ Բորբոսեան:

Անհամբեր սպասուած ժապաւեններուն ցուցադրութիւնը Ռիճըրթ սրահին եւ Համազգայինի թատերասրահին մէջ, Դեկտեմբերի սկիզբը 4 օրուան ընթացքին ներգրաւեց աւելի քան 2000 ակնդիրներ: 14 բեմադրիչներ եւ արտադրիչներ ներկայ էին փառատոնին:

Դատական կազմի անդամներ Սիլվա Պասմաճեան, որ Զանաւտայի ժապաւեններու Ազգային վարչութեան մէջ կ'աշխատի իբրեւ արտադրիչ, անուանի դերասանուհի Արսինէ Խանճեան եւ գնահատանքներու արժանացած նկարահանող Նորայր Գասպար ունէին ծանր պարտականութիւնը ընտրելու 2011-ի մրցանակակիր ժապաւենները՝ իրենց համապատասխան դասաւորումներուն մէջ:



«Նուր»ի 2011-ի դափնեկիրները. Լաւագոյն երկար ժապաւեն.

«Քինկ աֆ տը ուըրլտ», բեմադրիչ՝ Սթեֆան Գազանճեան:

Լաւագոյն կարճ ժապաւեն.

«Տը սիէյսշիփ», բեմադրիչ՝ Էմիլ Մկրտչեան:

«Նօ տարքնես ուիլ մէյք աս ֆորկէթ»,

բեմադրիչ՝ Հիւսէյն Զարապէյ:

Լաւագոյն վաւերագրական ժապաւեն.

«Սան աֆ տի օլիվ մըրընթ»,

բեմադրիչ՝ Մաթիւ Չայթինճիօղլու:

«Վոյըճ թու Ամասիա»,

բեմադրիչներ՝ Էրիք Հաչիկեան եւ Ռենտի Պել:

«Մայ Կրենտմա՛գ թաթուգ»,

բեմադրիչ՝ Սիւզան Խարտալեան:

Հանդիսատեսներու նախասիրութիւն.

«Հիր», բեմադրիչ՝ Պրէյտըն Զինկ:

«Մայ անքըլ Ռաֆայէլ», բեմադրիչ՝ Մարք Ֆուսքօ:

«Տը սնօ աֆ Քիլիմանճարօ»,

բեմադրիչ՝ Ռոպեր Կետիկեան:

«Նուր»ը կը կանաչնայ...

Փառատոնը 2011-ին ձեռնարկեց կենսուրոտի պահպանութեան ծրագրի մը եւ հիւրերուն դէպի Թորոնթօ թռիչքին պատճառած արտանետումներուն վնասին դիմաց՝ նուիրատուութիւն կատարեց «Հայաստան ծառատունկ ծրագիր»ին:



«ՆԱՅԻՐԻ» ՊԱՐԻ ԱՆՍԱՄՊԼԸ

ԿԸ ՀՄԱՅԷ ՀԱՆԴԻՍԱՏԵՍՆԵՐԸ՝ ՃԷՅ. ԷՖ. ԲԷՅ. ՕԴԱԿԱՅԱՆԻՆ ՄԷՋ



«Նայիրի» պարի անսամպլը՝ «Թի. Էս. Էյ.»ի ներկայացուցիչներուն հետ, Ճոն Ֆ. Բենետի օդակայանին մէջ:

Համազգայինի Նիւ Ճըրզիի «Նայիրի» պարի անսամպլը անգամ մը եւս տարին սկսաւ պարային հաճելի մթնոլորտի եւ ուրախ պահերու խոստումով, միաժամանակ՝ պարի ընդմէջէն հայ մանուկներուն փոխանցելով հայ մշակոյթի արժէքները:

Պարախումբը 2011-ի աշնան ստացաւ բազմաթիւ հրաւերներ եւ ունեցաւ շարք մը ելոյթներ՝ հանրութեան ներկայացնելով մանուկ պարողներուն շնորհները: Հայկական աւանդական պարերը կատարելով բարձր ճաշակով ձեւագծուած եւ ձեռագործ աւանդական տարազներով՝ «Նայիրի» հմայեց բազմութիւնները եւ պարզելեց հաճելի պահեր:

Աշնանային ելոյթները թագադրող իրագործումը արձանագրուեցաւ Նոյեմբեր 30-ին, երբ «Նայիրի» պարի անսամպլը հրաւիրուեցաւ Միացեալ Նահանգներու անվտանգութեան նախարարութեան Փոխադրամիջոցներու ապահովութեան վարչութեան («Թի. Էս. Էյ.») կազմակերպած չորրորդ տարեկան Այլազանութեան օրուան: Խումբը պարեց անվտանգութեան նախարարութեան Ճոն Ֆ. Բենետի օդակայանին կեդրոնին մէջ (Նիւ Եորք): Սահմանափակ տարածքին պատճառով՝ միայն 10 մանուկներ կատարեցին հայկական աւանդական երկու պարեր, «Թի. Էս. Էյ.» ծրագիրին եզրափակիչ յայտագիրին ծիրին մէջ:

«Նայիրի» պարի անսամպլը գեղեցկօրէն ներկայացուց հայկական մշակութային ժառանգու-

թիւնը «Թի. Էս. Էյ.»ի կեդրոնին մէջ հաւաքուած պաշտօնեաներուն եւ հիւրերուն: Առ ի գնահատանք իրենց շնորհալի եւ փայլուն կատարումներուն՝ մանուկները ստացան վկայագիր մը Դաշնակցային ապահովութեան տնօրէնին եւ փոխ տնօրէնին կողմէ:

«Նայիրի» պարի անսամպլը կը ձգտի բարձր պահել հայկական պարի աւանդական մշակոյթը: Պարախումբին ղեկավարը՝ Թովման Յարութիւնեան գլխաւոր պարողներէն եղած է Հայաստանի Պարի պետական անսամպլին, ղեկավարութեամբ՝ հռչակաւոր պարադրող Վանուշ Խանամիրեանի: Յարութիւնեան 1996-էն ի վեր հայ մանուկներուն հայկական պար կը սորվեցնէ Նիւ Եորքի մէջ, ուր կը ղեկավարէ Վանուշ Խանամիրեան պարի ակադեմիան:

Շուրջ 50 պարողներէ բաղկացած «Նայիրի» պարի անսամպլը ներկայացուցած է հայկական աւանդական շարք մը պարեր, ներառեալ՝ «Քոչարի», «Վարդավառ» եւ Յովհաննէս Թումանեանի Կիկոսի հեքիաթին վրայ հիմնուած գեղեցիկ պար մը: Պարախումբը տարուան ընթացքին բազմաթիւ առիթներով ելոյթ ունեցած է տարբեր վայրերու մէջ, հանրութեան մատուցելով պարային անգերազանցելի կատարումներ: Մասնագետ պարուսոյցին աշխատանքով կոփուած մանուկներուն շնորհալի շարժումները գեղեցիկ էին եւ հարազատ: Անոնք միաժամանակ կ'արտայայտէին նորարար եւ ժամանակակից ոճ:

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԱՆՆԱԽՆԸՆԹԱՅ ԱՄԻՍ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»Ը Կ'ԱՇԽՈՒԺԱՑՆԷ ԼԻՔԱՆԱՆԱՅԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿԵԱՆԸ



Ապրիլը լիբանանահայ թատերասերներուն համար յատկանշուեցաւ ոգեւորութեան վարակիչ մթնոլորտով մը: Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութիւնը կազմակերպեց թատերական ձեռնարկներու շարք մը՝ նուիրուած հայ թատրոնի նահապետ Սօս Սարգսեանի ծննդեան 80-ամեակին:

Այս առիթով Հայաստանէն հրաւիրուեցաւ «**Համազգային պետական թատրոն**»ը, որ իր բարձրորակ եւ արհեստավարժ խաղարկութեամբ ստեղծեց թատերական վայելքի խանդավառ պահեր:

«Հայ թատրոնի ամսուան» առաջին ներկայացումը Ուիլիլմ Սարոյեանի «Փրկութեան կղզի» թատերախաղն եր՛ բեմադրութեամբ Սիքուլայ Ծատուրեանի: Հայրենի տաղանդաւոր դերասաններուն սքանչելի կատարումով՝ հանդիսատեսները թափանցեցին տիպարներուն խորը եւ բաժնեցին համեստ պայմաններու մէջ երջանիկ ապրելու անոնց ուրոյն ընկալումները:

Այնուհետեւ Վիգէն Ստեփանեանի բեմադրած Ռոպեր Լամուրոյի «Ա՛խ կանայք, կանայք»ը՝ իր արկածախնդրական եւ սիրային ծիծաղաշարժ տեսարաններով հանդիսատեսը համակեց զուարթ տրամադրութեամբ: Էտուարտօ տը Ֆիլիփոյի «Ծնընդեան տօները սինիոր Կուպելլոյի տանը»՝ բեմադրութեամբ Սօս Սարգսեանի, ուրախ եւ երբեմն ողբերգական երանգներով հանդիսատեսին փոխանցեց մարդկային արժեքներու կառչելու բարոյախօսական պատգամներ: Իսկ Յովհաննէս Թումանեանի «Անբան Հուրին»՝ բեմադրութեամբ Հրաչեայ Գասպարեանի, աշակերտները հմայեց թատերական արուեստի բնորոշ կախարդանքով:


Թատերական այս ներկայացումներուն նախօրեակին Համազգայինի թատերախումբերու հայրենի բեմադրիչ Դաւիթ Յակոբեան «Հայ թատրոնը դէպի ո՞ւր» նիւթով դասախօսութեան մը ընթացքին ընդօժեց այն գաղափարը, թէ թատերական կեանքի մէջ «**ճնշումը յաղթահարելով՝ նոր իտեալներ եւ նոր տաղանդներ կը ծնին եւ ծաղկում կ'ապրին**»:

«Համազգային պետական թատրոն»ի ներկայացումներէն ետք Երեւանէն ժամանած բեմադրիչներն ու դերասանները հրապարակային հանդիպում մը ունեցան լիբանանահայ թատերական գործիչներու հետ եւ քննարկեցին «Հայ թատրոնի դիմագրաւած դժուարութիւնները»: Բանավեճը կեդրոնացաւ սերընդափոխութենէ մինչեւ թեմաներու բացակայութեան, լաւ ու վատ բեմադրութիւններու եւ թատրոնի մէջ ազգային գաղափարախօսութեան վերաբերող նիւթերու վրայ:

«Հայ թատրոնի ամսուան» իբրեւ վերջին ձեռնարկ՝ Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան թատերական միաւոր «**Գասպար Իփեկեան**» թատերախումբը երիտասարդ ուժերու յատուկ եռանդով ներկայացուց ազգային գաղափարախօսութեան պատգամ մը փոխանցող Լեւոն Շանթի «Ծամբուն վրայ» թատերախաղը՝ բեմադրութեամբ Ռոպեր Առաքելեանի:



Երագի, ծիծաղի, սիրոյ եւ ողբերգութեան պահեր...



ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԿՈՒ ԾԵԱԿԱՆԻ ՆՈՒՐՈՒՄԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ (ՀԱՅԱՍՏԱՆ)

«Ներդրում մը՝ արեւելահայ եւ արեւմտահայ իրականութեան փոխլրացման մէջ»:

Համազգային հիմնադրամի (Համազգայինի Հայաստանի կառույց) եւ Երեւանի պետական համալսարանին Հայ բանասիրութեան բաժանմունքին գործակցութեամբ՝ **Օջականի գրական եւ մանկավարժական աւանդին լայն արժեւորում՝ արդի չափանիշներով:**

Կը մասնակցին Հայաստանէն եւ Սփիւռքէն շուրջ 80 մասնագետներ:

Օջականի աւանդը կը վերլուծեն, այլոց կարգին, Մ. Նշանեան, Պ. Սևապեան, Ռ. Փիրումեան, Գ. Պըլտեան, Ս. Նիկողոսեան, Մ. Խաչատրեան, Կ. Աղաբեկեան, Ս. Մուրատեան, Ս. Դվոյեան, Զ. Սարիբեկեան, Ս. Աբելեան, Լ. Սէրյանեան եւ Ն. Յարութիւնեան:

Չեկոյցները կը հրատարակուին առանձին գիրքով: Տեղի կ'ունենայ շնորհահանդես:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՎԱՅԷ ՍԵԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ ԵՒ ԳՐԱՏԱՐԱԾ (ԼԻԲՐԱՆԱՆ)

- «Հայ գրականութեան շաբաթներ». հեղինակներ կը մակագրեն գիրքեր՝ վերանորոգուած գրատան մէջ:
- Մանկապատանեկան գիրքերու եւ դաստիարակչական խաղերու ցուցահանդես-վաճառք:
- Գիրքի պատրաստութեան մրցանք՝ մասնակցութեամբ միջնակարգի դասարաններու:
- Միջոցարոցական ընթերցանութեան մրցանքներ եւ մրցանակաբաշխութիւններ:
- Գիրքի Երեւանեան 7-րդ տօնավաճառի մասնակցութիւն՝ 200 հրատարակութիւններով:
- «Վերջ Հայաստանի»ի արեւմտահայերէն տարբերակի շնորհահանդես եւ ընթերցանութեան մրցանք:
- Հիմնադրութեան 80-ամեակի նշում՝ Մեթրոփոլիթըն պանդոկին մէջ:
- Անդամակցութիւն՝ Հայաստանի հրատարակչատուններու ընկերակցութեան:

«ԲԱԳԻՆ»Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԵՋ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱՑՈՒՄ (ԼԻԲՐԱՆԱՆ)


- Գեորգ Ը. Աբելեանի «Յկեանս նահատակութիւն 2.Աղբարի՛կ, ափիկ մը ջո՛ւր» գիրքին:
- Շուշիկ Տասնապետեանի «Կենաց ծառ» քերթողագիրքին:
- Սերոբ Շերպետեանի «Պատմութիւն սուլտանայերու» յուշագրութեան:
- Սօս Սարգսեանի «Կանչ» եւ «Լակոտ» գիրքերուն:
- Արտաւազ Փելեշեանի «Մենք», «Մեր դարը» եւ «Տարուան եղանակները» ժապաւեններուն:
- Յակոբ Պալեանի «Ինքնութիւն, որակ, մշակոյթ եւ վերականգնում» գիրքին:
- Ռոպերտ Հատտեճեանի «Մեր մայրենի լեզուն մահամերձի անկողինին մէջ» գրքոյկին:
- Հրայր Ծեպեճեանի «Հայուն գոյապայքարի ճանապարհը» գիրքին:
- Վրէժ Գլնճեան-Թուրեանի բանաստեղծական ստեղծագործութիւններուն:
- Սեդա Գրիգորեանի «Հայուհիի մը օրագրէն» պատմուածքներու գիրքին:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ «ՄՇԱԿՈՅԹԸ՝ ՊԱՆՂՈՒՄՆ» ՆԻԹՈՎ (ՄՈՆԻՏԵԱՆ)

- Կը պեղուի պանդոխտի գրականութիւնը, ընկերային փորձառութիւնը, տարագիրներու քով իրերու դերը:
- Կը մեկնաբանուին պանդոխտի երգեր, պանդոխտութեան բնաբանով գեղանկարներ եւ ժապաւեններ:
- «Պետրոս Աղամեան» թատերախումբը կը ներկայացնէ «Գազանը լուսնի վրայ» թատերախաղէն արար մը:

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԸՆՈՐՀԱՅԱՆԴԵՍ (ՀԱՅԱՍՏԱՆ)

- Հատորը կը մեկտեղէ Տիգրան Մեծի դերը արժեւորած 2005-ի գիտաժողովին 40 զեկոյցները:



ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

- Մովսես Պչաքճեանի «Ես եւ դուն» գիրքի եւ խտասալիկի շնորհահանդես (**Յայաստան**):
- Այտա Պուճիքանեանի խմբագրած «Տի Արմիհիլընզ աֆ Լեպանըն» գիրքի շնորհահանդես (**Մոնրեալ**):
- Արտեմ Յարութիւնեանի բանաստեղծութիւններու ընթերցում եւ արժեւորում (**Կլենտէյլ**):
- Խաչիկ Ղաշտենցի ծննդեան 100-ամեակի նշում՝ Թեքեան Մշակութային Միութեան հետ (**Նիւ Եորք**):
- Յովհաննէս Շիրազի ծննդեան 95-ամեակի նշում՝ ասմունքով եւ պատումներով (**Գամիշլի**):
- Միսաք Մեծարեցի ծննդեան 125-ամեակի նշում. կը խօսի Լալա Միւսսեան (**Յալթա**):
- Յակոբ Պարսումեանի «Իսթանպուլի հայ ամիրայական դասակարգը» երկի արժեւորում (**Լիբանան**):
- Լեւոն Շանթի մահուան 60-ամեակ. հոգեհանգիստ, խօսք, ներկայացում՝ շիրիմին շուրջ (**Լիբանան**):
- Լեւոն Շանթի վաստակը կ'արժեւորէ Մարուշ Երամեան, կը կատարուին ընթերցումներ (**Յալթա**):
- Ֆեթիհէ Չեթիհի եւ Այշէ Կիլ Ալթընայի «Թռները» վեպի թարգմանութեան ներկայացում (**Փարիզ**):
- «Գրանիշ» թերթի գրական քաղաքականութեան ծանօթացում (**Յայաստան**):
- Վահան Չանոյեանի «Եզրէն դուրս» բանաստեղծական գիրքի շնորհահանդես (**Լիբանան**):
- Յանդիպում Գրիգոր Պըլտեանի հետ՝ «Սեմեր» վեպի ֆրանսերէնի թարգմանութեան առիթով (**Լիբանան**):
- Լուլա Գունտաքճեան կը կատարէ ընթերցումներ՝ իր «Տի Եսիտենթըլ օպզըրվըր» գիրքէն (**Կլենտէյլ**):
- Ծանօթացում՝ Վահէ եւ Արա Օշականի «Յող հայրենի» գրական-լուսանկարչական երկին (**Լա Զրեշէնթա**):
- Դանիէլ Վարուժանի երեկոյ. կը խօսի Արթօ Ղաւիթեան, կը կատարուին ընթերցումներ (**Կիպրոս**):
- «Գոհարներ Պարոյր Սեւակէն». Լուսինեա՝ բանաստեղծին մահուան 40-ամեակին (**Յալթա**):
- Լեւոն Չալէն Սիւրմելեանի կեանքն ու գործը կ'արժեւորէ Չարեհ Սափսըզեան (**Օրընճ Զաունթի**):
- Յայ գրական կտորներու սպաներէնի թարգմանութիւն (**Մոնթեվիտո**):
- «Յուլքեր» գրական-մշակութային յայտագիրներ՝ «Կոմիտաս ռատիօժամ»էն (**Մոնթեվիտո**):
- «Պատմութեան ժամ». մանուկներ ամէն ամիս կը լսեն հայկական նիւթով պատմութիւն մը (**Մոնրեալ**):
- Պուլկարերէն-հայերէն «Վահան» շաբաթաթերթը կը բոլորէ իր 20-րդ տարին (**Փլովտիս**):

ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

- «Արեւմտահայերէնի պաշտպանութիւնը». Յակոբ Պալեան (**Կլենտէյլ**):
- «Մետրոպէան ուղղագրութիւնը նախապայման՝ հայկական ինքնութեան վերականգնման». Պարոյր Յայրիկեան (**Նիւ Եորք**):
- «Պատմական Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ փոփոխուող բնակարը» եւ «Յայկական Կիլիկիոյ հետքերով». Ռիչըրտ Յովհաննիսեան (**Լոնտոն**):
- «Յայոց Մեծ եղեռնը». վաւերագրական տեսաերիզներ. Գարեգին Չուգասզեան (**Փարիզ**):
- «Կիլիկիոյ Յայկական թագաւորութեան նկարագարը ձեռագիրներու 12-13-րդ դարու արուեստը». Լեւոն Չուգասզեան (**Փարիզ**):
- «Յայ Տի. Էն. Էյ.». Փիթըր Յրեշտակեան: Գործակցութեամբ՝ Յ. Բ. Ը. Մ.-ի (**Մոնրեալ**):
- «Ժամանակակից հայկական Սփիւռքը եւ անոր գեղարուեստական գրականութեան հարցերը». Յակոբ Պալեան (**Նիւ Եորք**):
- «Յայեցի դաստիարակութեան մարտահրաւերներ». Տիգրան Եկաւեան (**Վալանս**):
- «Մուսա Լեւոն հերոսամարտի 96-ամեակ». Յակոբ Ճանպազեան (**Նիւ Եորք**):
- «Պիպլոս քաղաքի հնախուզական հարստութիւնը». Կասիա Յարութիւնեան-Պաղտասարեան (**Լիբանան**):
- «Ժողովուրդի մը հոգեվարքը». Մարկ Նշանեան (**Նիւ Ճըրզի**):
- «Յայրենի երիտասարդութիւնը եւ հայ ժամանակակից գրականութիւնը». Լիլիթ Գալստեան (**Լիբանան**):
- «Յայրենի ժամանակակից գրականութիւնը եւ մամուլը». Երուանդ Տէր Խաչատուրեան (**Կիպրոս**):

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱՆՈՑ

- Երաժշտանոցի հիմնադրության 25-ամեակի համերգներ (Հալեա):
Յոթելիսական եզրափակիչ ձեռնարկ.
Երաժշտանոցին նուիրուած ցուցահանդես, տեսաերիզի ցուցադրութիւն, խօսք, աշակերտներու եւ ուսուցիչներու կատարումներ, պարզեւատրում, յուշանուէրներու փոխանցում: «Հայ երաժշտական մշակոյթը ԺԹ. դարու 2-րդ կիսուն».
Կը խօսի Ա. Ճենտերեճեան, կը նուագեն ուսուցիչներ:
Արմէն Ճենտերեճեան կը ծանօթացնէ Ալ. Սպենդիարեան երաժիշտը, աշակերտներ կը կատարեն անոր գործերն:
- Կիսամեայ եւ ամավերջի ունկնդրութիւններ: Ուսուցիչներու համերգ (Լիբանան):
Կիթառահարներու, Զուլթակահարներու եւ Սենեկային նուագախումբերու ելոյթներ:
- Կիթառի եւ դաշնակի աշակերտներու տարեվերջի համերգ (Յունաստան):

ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄՆԵՐ

- Կանաչեանի նուիրուած տեսաերիզի պատրաստութիւն՝ Կեդրոնական Վարչութեան պատուերով (Հայաստան):
- «Կարկաչ» պատանեկան երգչախումբը կը կատարէ Կանաչեանէն «19 փոքր երգեր» (Լիբանան):
- Միջդպրոցական երգչախմբային փառատօն. կը մասնակցին 10 վարժարաններ՝ Կանաչեանէն 2 երգով (Լիբանան):
- «Քնար» երգչախումբի եւ Ս. Յակոբ եկեղեցիի «Նոր ծաղիկ» մանկապատանեկան երգչախումբի ելոյթ (Սոնրեալ):

ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ԵՒ ՆՈՒԱԳԱԽՄԲԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐ

- «Զուարթոնց» երգչախումբի ելոյթներ՝ Սայաթ Նովայի խմբերգներու կատարումով (Հալեա):
Միատեղ ելոյթ՝ հայրենի «Հայկազունք» համոյթին հետ:
- «Ն. Աղբալեան» մասնաճիւղի Եսթրատային նուագախումբի ելոյթներ՝ 30 երաժիշտներով (Հալեա):
- «Աղթամար» երգչախումբի եւ պարախումբի ելոյթներ՝ Ռուսական մշակութային կեդրոնին մէջ (Ղամասկոս):
- «Արեգակ» մանկապատանեկան երգչախումբը կը մասնակցի Եղեռնի ոգեկոչումին. Թայմզ հրապարակ (Նիւ Եորք):
- «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբը համերգ մը կը նուիրէ Ալեքսան Մակեանի (Լիբանան):
Կ'երգէ Սրբազան երաժշտութեան փառատօնին՝ «Աշխարհի գեղեցկութեան համար» երգացանկով:
- «Այգ» երիտասարդական երգչախումբի եւ Ժողովրդային գործիքներու նուագախումբի համերգ (Լիբանան):
- Մանկապատանեկան երգչախումբի տարեկան ելոյթ՝ հայկական երգացանկով (Թորոնթօ):

ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

- Խաչիկ Եղլմագեան կը ներկայացնէ Կոմիտասը, կը ղեկավարէ «Սահակ Մեսրոպ» երգչախումբը (Վալանս):
- Մեծարանք՝ Սոնթեվիտոնյի առաջին ժողովրդային նուագախումբի ղեկավար Արսէն Մոմճեանի (Սոնթեվիտո):
- Արամ Խաչատուրեանի նուիրուած յայտագիր՝ Ուրուկուէյի Պետական ձայնասփիւռէն (Սոնթեվիտո):
- Յասմիկ Խաչատուրեան կ'արժեւորէ Սայաթ Նովայի երգարուեստը (Շիքակօ):
- Մակար Եկմալեանի ծննդեան 155-ամեակ.
Յարութիւն Զենտիմեան կը ներկայացնէ երաժիշտը, կը ղեկավարէ գեղարուեստական յայտագիր մը (Շիքակօ):

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԻՌԸՆԿԱԼԱԾ ՀԱՄԵՐԳՆԵՐ

- Թաթա Սիմոնեանի համերգային ճաշկերոյթը եւ հրապարակային ելոյթը (Լիբանան):
- Եաքովոս Զոլանեանի կիթառի կատարումները (Կլենտէյ):
- «Երգ երգոց»՝ հայրենի եւ լիբանանահայ երգիչներով (Լիբանան):
- «Վիզա» խումբին ռոք կատարումները եւ «Արեւ» համոյթին ժողովրդային մեկնաբանութիւնները (Պոսթըն):
- Յարութ Փամպուրճեանի համերգ-ճաշկերոյթը, ժողովրդային եւ հայրենասիրական երգերու ելոյթը (Լիբանան):
- Սիտնիէն երիտասարդ երաժիշտներու դասական համերգը (Փարիզ):
- «Մուսաներ» եւ «Նոր քուարթեթ» խումբերը՝ աւանդական մեղեդիներու ժամանակակից երանգներով (Պոսթըն):
- «Արշակ Սիրունեան Եռեակ»ի ճազի կատարումները՝ հայկական եւ արեւմտեան տարրերով (Ուաշինկթըն):
- Նորայր Զարտաշեանի փչողական գործիքներու նուագը՝ «Ծառաստան» խտասալիկի մատուցումով (Պըրպէնք):
- «Երբ ճազը կը հանդիպի բանաստեղծութեան».
Մաշա Ղարիպեանի «Մայ թրիփլէթ»ը կը հանդիպի Արեւիկ Մարտիրոսեանի ասմունքին (Փարիզ):
- Գեորգ Հաճեանի (թենոր) եւ Տաթեւիկ Արթինեանի (դաշնակ) կոմիտասեան համերգը (Սան Փաուլօ):

ՊԱՐ



- «Նայիրի», «Նանօր» եւ «Մարալօ» մեծերու, պատանիներու եւ փոքրերու պարախումբերը Սոսթիի մէջ կը ներկայացնեն «Հայկական ամենադասական հարսանիք»:
- «Նանօր» եւ «Նայիրի» պարախումբերը ելոյթ կ'ունենան Թեսաղոնիկէի մէջ:
- «Նայիրի» պարախումբը կը մասնակցի Էդիոյի եւ Կոռնթոսի «Համաշխարհային ամենադասական պարերու» փառատօներուն եւ Հայաստանի անկախութեան 20-ամեակի ձեռնարկին (Յունաստան):
- Համազգայինի պարի փառատօնին կը մասնակցին Արեւմտեան Ամերիկայի մասնաճիւղերու «Անի», «Լորի», «Նայիրի», «Երազ» պարախումբերը եւ աւելի քան 250 պարի աշակերտներ (Կլենտէյլ):
- «Սարդարապատ» պարախումբը հանրութեան կը ներկայանայ 40 պարողներով (Հալէպ):
- «Շուշի» մանկապատանեկան պարախումբը բեմ կը բարձրանայ 100 պարողներով (Հալէպ):
- «Նայիրի» մանկապատանեկան պարախումբը եւ «Արեզակ» մանկապատանեկան երգչախումբը 80 անդամներով կը մասնակցին Հայաստանի անկախութեան 20-ամեակի մշակութային ձեռնարկին (Նիւ Ճըրզի): Պարախումբը կը մասնակցի «ՃԷՂ. ԷՖ. ԶԷՂ.» օդակայանին մէջ Այլազանութեան օրուան յայտագիրին:
- «Անի» պարախումբը բեմ կը բարձրանայ «ԼԷ Պոն Տիսալ» պարախումբին հետ՝ հայկական եւ քեպէքեան պարերով: Կը պարէ՝ Արա Գեորգեանի համերգին (Մոսկուա):
- «Էրեբունի» պարախումբը կ'ընկերակցի Արա Գեորգեանի համերգին (Թորոնթօ):
- «Քնար» պարախումբի ելոյթին կ'ընկերակցի Հայաստանի Ժողովրդային գործիքներու նուագախումբը (Լիբանան):
- «Սարդարապատ» պարախումբը կը պարէ մշակոյթներու «Սքոքի փառատօն»ին (Շիքսկօ):
- Համազգայինի պարարուեստի ուսումնարանը եւ «Էրեբունի» պարախումբը կու տան միացեալ ելոյթ մը (Թորոնթօ):
- «Նուռ» պարախումբին 5-10 տարեկան մանուկները կը ներկայացնեն պարերու շարք մը (Ֆրեզնօ):
- «Երազ» պարային դպրոցը կը կատարէ պարեր՝ «Հայերը. հերոսական ճամբորդութիւն» նիւթով (Օրլեն Զաւուսթի):
- «Շիրազ» պարախումբը կը մասնակցի. Ուրուկուէյի գաղութներուն նուիրուած «Ռդիսական. ճանապարհ դէպի յոյս» հանդիսութեան: Հայ Դատի յանձնախումբին կազմակերպած «Հայաստանեան համերգ դ.» ձեռնարկին: Արա Գեորգեանի «Աշխարհի խաղաղութեան շրջապտոյտ» համերգին (Մոսկուա):
- «Սիփան» պարախումբը կը մասնակցի «Միջերկրականեան ժողովրդային պարերու փառատօն»ին: Կ'ընկերակցի լիբանանեան «Ֆայիա» երգչախումբին համերգին, կու տայ իր տարեկան ելոյթը (Կիպրոս):
- «Նայիրի» փոքրերու եւ մեծերու պարախումբերը կու տան իրենց տարեկան ելոյթը (Սան Ֆերնանտօ):
- «Անի» պարախումբը (Մոսկուա), «Արեւ» համոյթը (Պոսթըն) եւ «Նայիրի» պարախումբը (Նիւ Ճըրզի) կը մասնակցին Յովնանեան դպրոցին գլխաւորած Պարի եւ երաժշտութեան համոյթներու փառատօնին (Նիւ Ճըրզի):
- Մեծն Պոսթընի «Էրեբունի» պարի դպրոցն ու պարախումբը կը կազմակերպէ իր առաջին հանդիպումը (Պոսթըն):
- «Անի» պարախումբը իր տարեկան ելոյթը կը նուիրէ Նորայր Մեհրաբեանի ծննդեան 70-ամեակին: Կը մասնակցի Հայաստանի անկախութեան 20-ամեակի ձեռնարկին (Կլենտէյլ):
- «Արաքս» պարախումբը կու տայ ազգագրական եւ ժողովրդային պարերու իր տարեկան ելոյթը (Տիբոյթ):
- «Կաքաւիկ» Այնճարի մանկապատանեկան պարախումբը ելոյթ կ'ունենայ Պուրճ Համուտի մէջ (Լիբանան):
- «Գայանէ» պարի դպրոցը աւելի քան 250 աշակերտներով կը պատրաստուի իր երկամեայ ելոյթներուն (Լիբանան):

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐ

- Կը ցուցադրուի Էտկար Պաղտասարեանի «Ֆրամ Արարաթ դու Չայըն» վաւերագրական ժապաւենը (Թորոնթօ):
- Կը ցուցադրուի Հրաչ Զէշիշեանի «Խաչագողի յիշատակարանը» ժապաւենը (Շիքսկօ), (Լիբանան):
- Կը ցուցադրուին Թամարա Ստեփանեանի «Լիթըլ սթոնզ» եւ «Ֆեպրուարի 19» ժապաւենները (Շարժա):
- «Նուռ շարժապատկերի 6-րդ փառատօն»ը կ'ընդգրկէ 14 երկիրներէ հայ բեմադրիչներու 37 ժապաւեններ (Թորոնթօ):
- Նաւասարդեան սրահին մէջ հայկական հին եւ նոր ժապաւեններ կը ցուցադրուին հայերէնով (Լոնտոն):



ԹԱՏՐՈՆ

- «Ռազմիկ» մանկապատանեկան թատերախումբը կը ներկայացնէ.
«Արատայի առասպելները» եւ «Մեր մեղքը» թատերախաղերը (**Յալէպ**):
- «Համաշխարհային թատրոնի օր». կը պարզեւատրուին Համազգայինի հետ գործակցած բեմադրիչներ (**Յալէպ**):
- «Պետրոս Աղամեան» թատերախումբը կը ներկայացնէ Արա Արծրունիի «Պահածոյի տուփերը» (**Մոնրէպ**):
- «Հայ Թատրոնի Ամիս» (**Լիբանան**).
Սօս Սարգսեանի ծննդեան 80-ամեակին առիթով՝ «Համազգային պետական թատրոն»ը կը ներկայացնէ.
Ու. Սարոյեանի «Փրկութեան կղզի», Ռ. Լամուրոյի «Ա՛խ կանայք, կանա՛յք», Է. տը Ֆիլիփոյի «Ծննդեան տօները սինիոր Կուպելլոյի տանը» եւ Յ. Թումանեանի «Անբան Հուրին» թատերախաղերը:
«Հայ Թատրոնը դէպի ո՛ր» նիւթով կը դասախօսէ հայրենի բեմադրիչ Դաւիթ Յակոբեան:
Հայրենի եւ լիբանանահայ բեմադրիչներ կը քննարկեն «Հայ թատրոնի դիմագրաւած դժուարութիւնները»:
«Գասպար Իփեկեան» թատերախումբը կը ներկայացնէ Լեւոն Շանթի «Ճամբուն վրայ» թատերախաղը:
- «Արեգ» մանկապատանեկան թատերախումբը կը ներկայացնէ «Յոյսի ծառը» թատերախաղը (**Լիբանան**):
- «Արեգ» թատերական դպրոցէն վկայեալներ կը ներկայացնեն մանկապատանեկան թատերախաղեր եւ մնջախաղեր:

ՀԱՍՏՉՊԱՅԻՆ ԶԻՐՆՎԱԼԱԾ ԹԱՏԵՐԱՆԱԴԵՐ

- Զրանդ Սարգարեանի «Լռութիւն բոլորածէ ծիածանի մէջ» երկի բեմական մատուցումը՝ անգլերէնով (**Նիւ Եորք**):
- Վարդան Պետրոսեանի «Ճակատագրի կատակներ»ը (**Լիբանան**):

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐ

- «Սիրոյ եւ ասմունքի երեկոյ»՝ Քանատայէն եւ Լիբանանէն արուեստագետներով (**Մոնրէպ**):
- «Քնար» պարախումբին Միջդպրոցական պարի փառատօնին կը մասնակցին 18 հայ վարժարաններ (**Լիբանան**):
- Համազգայինի գեղարուեստի միաւորները կը ներկայացնեն Եղեռնի ոգեկոչման յայտագիր մը (**Լիբանան**):
- «Գեղարուեստական ցերեկոյթ». կը ցուցադրուին հայ արուեստագետներէ գեղանկարներ:
Ելոյթ կ'ունենան «Արագ» եւ «Արաքս» պարախումբերը (**Սան Ֆրանսիսքո**):
- Հայաստանի անկախութեան առիթով «Արեգակ» երգչախումբը, Ս. Թովմաս եւ Ս. Սարգիս եկեղեցիներուն պարախումբերը կը հիւրընկալեն Ա. Տապանճեանի «Տի Էլեմընթ պենտ»ը (**Պոսթըն, Նիւ Ճըրզի, Ուաշինկթըն**):
- «Մշակոյթի տաղանդաւոր պատանիներ» (**Կլենտէյլ**).
Աւելի քան 60 աշակերտներու երգով, նուագով, պարով եւ գծանկարներով կը նշուի Հայ մանուկի տարին:
- «Գարունդ հայերէն Է գալու». ասմունք՝ Սիլվա Իւզպաշեանի (**Կլենտէյլ**):
- «Պոլսահայ երեկոյ». խօսք, սահիկներու ցուցադրութիւն, պար, թատրոն, ասմունք, պոլսական ճաշեր (**Կլենտէյլ**):
- «Անի քաղաք. հիմնադրութեան 1050-ամեակի նշում».
Ընթերցանութիւն, լուսանկարներու եւ ժապաւեններու ցուցադրութիւն (**Լոնտոն**):
- «Հայաստան ասելիս...». ասմունք, նուագ, երգ եւ պար՝ մասնակցութեամբ «Էրեբունի» պարախումբին (**Թորոնթօ**):
- Ռոսթովի «Յոյսի աստղեր» մանկապատանեկան պարախումբի եւ երգչախումբի ելոյթներ (**Մոնրէպ**):
- «Հայկական օր». կը մասնակցին «Նայիրի» պարախումբը եւ «Սայաթ Նովա» երգչախումբը (**Սան Ֆրանսիսքո**):
- Ամանորին «Հորիզոն», «Էյ. Էմ. Ծի. Էյ.» եւ «Շանթ» կայաններէն ելոյթ կ'ունենան «Սայաթ Նովա» երգչախումբը, «Անի» եւ «Երագ» պարախումբերը, Կլենտէյլի երաժշտանոցներէն հայ աշակերտներ (**Կլենտէյլ**):
- Միջաշակերտական ասմունքի, ուղղագրութեան, գեղագրութեան եւ գեղանկարչութեան մրցանքներ (**Գամիշլի**):
- «Կոմիտաս ռատիօժամ»ի հաղորդումները կը բոլորեն 76-րդ տարին (**Մոնթեվիտո**):



ԳԵՂԱՐՈՒԵՍ

«ԼԻՒՍԻ ԹԻՒԹԻՆՃԵԱՆ» ՑՈՒՑԱՍՐԱԶ. ՑՈՒՑԱԶԱՆԴԵՍ-ՎԱՃԱՌՔ (ԼԻԲԱՆԱՆ)

- Շողիկ Եւ Գեորգ Ուլաշեաններ. գեղանկարներ:
- Սիրվարդ Ֆազլեան. ջրանկարներ:
- Միսաք Թերզեան. «Վերածնունդ» վերնազիրով գեղանկարներու հաւաքածոյ:
- Գրիգոր Ակոբեան. «52 տարուան եղափոխութիւն» վերնազիրով գեղանկարներու հաւաքածոյ:
- Լիւսի Թիւթիւնճեան. իւղանկարներ:
- Միրէյ Կոկիկեան. «Խունկ, հապալսի եւ վանիլ» բնաբանով գեղանկարներ:
- Արեւ Պետրոսեան. «Գոյներ Յայաստանէն» բնաբանով գեղանկարներ:
- Աննա Շահնազարեան. իւղանկարներ:
- Զրայր. «Կարօտախտ» բնաբանով գեղանկարներ:
- Կակոյի «Շարժում բնութեան մէջ» բնաբանով պրոնզէ քանդակներ:
- Լիւսի Թիւթիւնճեան. գեղանկարներ (բարեսիրական վաճառք):

ԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑՆԵՐ

«Թորոս Ռոսլին» կերպարուեստի դպրոց (Լիբանան):

Կիսամեայ եւ ամսվերջի ցուցահանդէսներ:

Միջդպրոցական գծագրական մրցանք՝ մասնակցութեամբ 23 վարժարաններու:

«Ռուբէն Նաքեան» արուեստի դպրոցի աշակերտական հաւաքական ցուցահանդէս (Այնճար):

«Արշիլ Կորբի» կերպարուեստի ուսումնարան (Հալեպ):

Տարեկան ցուցահանդէս:

Աշակերտներ կը ստանան մրցանակներ՝ պետական «Երկրորդ մանկութիւն» գծագրական փառատօսին,

Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան «Հայրենիք քեզ այսպիսին եմ տեսնում» մրցանքին:

«Սանահին մասնաճիւղ»ի Գեղանկարչութեան դասընթացներ՝ Նոյեմբերէն սկսեալ (Սոնրեպ):

ՄԱՍՆԱՃԻՐԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՑՈՒՑԱԶԱՆԴԵՍՆԵՐ

- Յակոբ Ժամկոչեանի գեղանկարներու ցուցահանդէս (Դամասկոս):
- Կարէն Պետրոսեանի նկարչական գործերու ցուցահանդէս (Սոնրեպ):
- Լուսանկարչութեան ցուցահանդէս եւ մրցանակաբաշխութիւն (Լիբանան):
- «Երեւանեան վերնիսած»՝ «Վասպուրական» սրահին մէջ (Լիբանան):
- «Հայկական տարազներ»՝ «Միջերկրականի ավանդական տարազներ» ցուցահանդէսին առիթով (Կիպրոս):
- «Հայկական արուեստի ցուցահանդէս»՝ 24 արուեստագետներով (Փասատիւնա):
- «Բագին գեղանկարչական ցուցահանդէս»՝ հայ եւ օտար 68 արուեստագետներով (Կլենտէյլ):
- Տաղանդաւոր երիտասարդներու լուսանկարչական ցուցահանդէս (Փասատիւնա):
- Տիգրան Յարութիւնեանի անհատական 5-րդ ցուցահանդէս (Կլենտէյլ):

ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

ԿԸ ՀԻՄՆՈՒԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ» ՄԱՍՆԱՃԻՐԸ (ԱՄԷ)

Համագալիսի Կեդրոնական վարչութիւնը Շարժայի հայ գաղութին կարիքները գոհացնելու նպատակով՝ պաշտօնական հանդիսութեամբ մը հիմը կը դնէ աւելի քան 20 անդամ հաշուող իր մասնաճիւղին, որ անմիջապէս կը ձեռնարկէ մշակութային գործունէութեան:



ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՐՍԵՅԻ ՃԵՄԱՐԱՆ (ՖՐԱՆՍԱ) *

Մարզական համալիրի մը կառուցումը կը սկսի 2011-ի Յունուարին եւ բացումը կը նախատեսուի 2013-ին: Երկրորդականի բաժանմունքներու համար պայմանագրութիւններ կը կնքուին Ֆրանսայի պետութեան հետ: Հարիւր առ հարիւր համեմատութեամբ յաջողութիւն կ'արձանագրուի Պրեօվէի եւ Պաքալորէայի քննութիւններուն: Դպրոցը կ'ընդառաջէ Հայաստանի Սփիւռքի նախարարութեան «Արի տուն» ծրագիրին, Հայաստան կ'ուղարկէ երկրորդական կարգերու 18 աշակերտներ, զիրենք հիւրընկալող ընտանիքներու քով:

ԱՐՇԱԿ ԵՒ ՍՈՖԻ ԳՕԼՍԵՆՆ ՃԵՄԱՐԱՆ (ԱՄՏՐԱԼԻԱ) *

Պետութիւնը նախակրթարանի բաժինը կը դասէ Նիւ Սաութ Ուելզի առաջնակարգ նախակրթարաններուն շարքին: Կը նշուի դպրոցին 25-ամեակը. տեղի կ'ունենայ ընթերցիք երեկոյ՝ աշակերտական ճոխ յայտագիրով: Ճեմարանի շուրջ 250 բարեկամներ կը մասնակցին քայլարշաւի մը՝ դպրոցին հիմնադրամին համար: Աշակերտներ դպրոցին նախաձեռնութեամբ կ'այցելեն Հայաստան:

**Մեր ապագայ հրատարակութիւններուն մէջ աւելի մանրամասնօրէն կ'անդրադառնանք:*

ՀԱՄԱԳՈՒՄԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻԱՄՈՐ (ՀԱԼԷՊ)

Հայագիտական հիմնարկի 3-րդ հունձքը՝ 8 շրջանաւարտներ կը ստանան վկայական (2010): Կը շարունակուին հայերէնի եւ յարակից նիւթերու հայագիտական դասընթացքները (Զեսապ): Կը նշուի Գրիգոր Զօհրապի ծննդեան 150-ամեակը. կը խօսի Յակոբ Չոլաքեան, կ'ընթերցեն ուսանողներ:

ԿՐԹԱՆՊԱՍՏ

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը Զարվաճառի դպրոցին կը նուիրէ համակարգչային սարքեր (Արցախ): «Յակոբ Կարապետ» կրթաթոշակը կը յատկացուի Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան բաժանմունքի 6 ուսանողներու (Հայաստան):


ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՔ (ՖՈՐՈՄ)

Ազգային արմատներու եւ մշակութային ժառանգութեան հետ հաղորդակցելու առիթ մը:

Համազգայինի 18-րդ հաւաքին կը մասնակցին 11 երկիրներէ 34 հայ ուսանողներ:

Հայաստանի մէջ 2 շաբթուան ընթացքին անոնք

- կը ծանօթանան հայրենիքի կեանքին,
- կ'այցելեն պատմական արժէք ներկայացնող վայրեր եւ կառոյցներ,
- ներկայ կը գտնուին մշակութային ձեռնարկներու,
- մաս կը կազմեն գեղարուեստական աշխատանոցներու,
- կը լսեն պատմական, գրական եւ մշակութային նիւթերով դասախօսութիւններ,
- կը հանդիպին մտաւորականներու, քաղաքական եւ հանրային գործիչներու,
- կ'ապրին հաճելի պահեր, կը հաստատեն բարեկամութիւններ,
- կը հրատարակեն հաւաքին առօրեան նկարագրող թերթիկ մը,
- կը կամրջուին վիհերը տարբեր երկիրներէ ուսանողներու միջեւ՝ հայութեան առնչուած նիւթերու քննարկումով:



ՄԵԼԱՆՔԹՈՆ ԵՒ ՅԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

«ՄՓԻՒՌՔԻ ԼԱԻԱԳՈՅՆ ԿՐԹՕՃԱԽ»Ը՝ ԳԷՊԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՄՆԱՄԵԱԿ

Սփիւռքի հայկական իրականութեան մէջ առանցքային է Համազգայինի Մելանքթոն եւ Յայկ Արսլանեան Ճեմարանի դերը: Աւելի քան 82 տարիէ ի վեր Համազգայինի շունչը ինքնին թափ տուած է այս կրթօճախին ուռճացումին եւ այսօր զայն արժանի դարձուցած՝ Սփիւռքի լաւագոյն հայկական վարժարանի որակումին:

Միշտ իր ժառանգած ավանդներուն ներշնչումով, սակայն գիտակից՝ ներկայի եւ ապագայի փոփոխուող պահանջներուն, Ճեմարանը կը ձգտի «դաստիարակել լաւ մարդեր եւ լաւ հայեր, ընդհանուր գիտութեան տէր, հայեցի դիմագիծով սերունդներ»:

Ինքնապահպանումի այս բնագոյով գործած են անոր հիմնադիրները, այս արժէքներով առաջնորդուած են դաստիարակներ, փորձած են յաղթահարել մարտահրաւերներ, կերտած են յաջողութիւն եւ վստահութիւն:

Ի զուր չէ, որ երբ այսօր համացանցի վրայ կը յայտնուի ավելի քան կէս դար առաջ նկարահանուած պատմական տեսաերիզ մը, որ կը պատկերէ Ճեմարանի առօրեան՝ իր մանկապարտէզով, դասապահերով, հանդէսներով, տնօրէնով եւ ուսուցիչներով, Ճեմարանականներ անմիջապէս կը սկսին տարածել զայն՝ աշխարհի չորս ծագերուն...

Լարուած ճիգ կ'ենթադրէ միաժամանակ գոհացնել ծնողներու ակնկալութիւնները՝ իրենց զաւակները կեանքին պատրաստելու, քայլ պահել՝ ակադեմական միջազգային չափանիշներու հետ եւ կազմաւորել իրենց հայկական ինքնութեամբ ամուր սերունդներ:

Այսօր Ճեմարանի աշակերտութեան թիւը կը հասնի 700-ի, եւ անոր կրթական մակարդակը ցայտուն կերպով կ'արտացոլայ պետական քննութիւններու արդիւնքներուն մէջ: Այն իրողութիւնը, թէ Ճեմարանը կը շարունակէ գոյատեւել գլխաւորաբար ծնողներու վճարած կրթաթոշակով եւ բարգաւաճիլ՝ նուիրատուներու հաւատաւոր օգնութեամբ, ապացոյցն է անոր կրթական մշակներուն հաստատած ուրոյն կարողականութեան:

Յետագայ էջերը հիմնուած են Ճեմարանի պատասխանատուներու, ծնողներու եւ շրջանաւարտներու ուղղուած հարցումներու վրայ: Անոնք կը միտին գաղափար մը տալ, թէ Համազգայինի այս կառոյցը ինչ տեսլականներով եւ ճկունութեամբ կը շարունակէ իր երթը՝ դէպի իններորդ տասնամեակ:



ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ճեմարանը իր հիմնադրութեամբ կը խտացնէր Սփիւռքի մէջ կազմաւորուող մշակոյթի մը յատկանիշները եւ հայրենիքէ դուրս պատմական նոր ժամանակշրջանի մը ոգին: Հիմնադիրները իբրեւ նպատակ ունեին «պատրաստութիւնը վաղուան մտաւորական սերունդին, որ իր վրայ պիտի վերցնէր Սփիւռքի մէջ հայապահպանման, հայ լեզուին ու գրականութեան եւ հայ մշակոյթին զարգացման պատասխանատուութիւնը»:



Այսօր համաշխարհային հոսանքներու դիմաց կանգնած Ճեմարանը ինչպիսի՞ մշակոյթ մը եւ ոգի մը կը խտացնէ հայկական ժամանակակից իրականութեան մէջ:

«Ճեմարանի հիմնադրութենէն ի վեր անցած են 82 տարիներ: Նոր կազմաւորուող Սփիւռքի պահանջները բնականաբար փոխուած են եւ այժմու սփիւռքահայերը այլեւս վերապրումի եւ ինքնութեան պահպանման բնագոյներով առաջնորդուող մարդեր չեն: Գաղութներու տեղական պայմաններուն պատշաճեցումը, տնտեսական ու ընկերային մերումը այլեւս իրողութիւններ են, որոնք կարելի չէ անտեսել,- կ'ըսէ Մ. Ե. Յ. Արսլանեան Ճեմարանի տնօրէն Տիգրան Ճինպաշեան:- Դպրոցը կը ստեղծուի հաւաքականութեան մը պահանջին գոհացում տալու համար, սակայն իր գործունէութեամբ դպրոցը այդ դրական հոլովոյթին կը նպաստէ, հաւաքականութեան տնտեսական, ընկերային ու մշակութային բարելաւումը կ'երաշխաւորէ»:

Լի հաւաքականութեան մը պահանջին գոհացում տալու համար, սակայն իր գործունէութեամբ դպրոցը այդ դրական հոլովոյթին կը նպաստէ, հաւաքականութեան տնտեսական, ընկերային ու մշակութային բարելաւումը կ'երաշխաւորէ»:

«Իր զաւակը Ճեմարան ուղարկող ծնողը իրաւունք ունի ակնկալելու, որ ան ստանայ համապարփակ կրթութիւն, հասնի օրէնքով սահմանուած վկայականներուն, դառնայ գիտակից, կեանքի երեւոյթները վերլուծելու ատակ, ինքնուրոյն ու պատասխանատու անձնաւորութիւն»:

ՏԻԳՐԱՆ ԾԻՆՊԱՇԵԱՆ, Մ. Ե. Յ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՆՈՐԵՆ

Մէկ կողմէ՝ աշակերտը պետական քննութիւններու եւ համալսարան մուտքի պատրաստելու պարտադրանքը, միւս կողմէ՝ հայեցի դաստիարակութեան նպատակը կը ստեղծեն «երկու տիրոջ ծառայելու» վիճակ մը, ինչպէս դեռ 1960-ական տարիներուն տեղեկագիրի մը մէջ նշած է Ճեմարանի երբեմնի տնօրէն Սիմոն Վրացեան (նախկին վարչապետ՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան): Չիջումները անխուսափելի են: «Ներկայ պայմաններուն մէջ անկարելի է պետական պաշտօնական վկայականներու տիրացման ու բոլորին համար համալսարանական դռները բանալու ընկերութեան պահանջը անտեսել: Պետական ծրագիրներու ամբողջական գործադրութեան պահանջը հրամայական է այլեւս: Ասիկա կարելի չէ իրագործել առանց զուտ ազգային մտահոգութիւններէ բխած նիւթերու կրճատման, ոմանց թեթեւացման, ուրիշներու լրիւ անհետացման», ինչպէս կը նկարագրէ Ճինպաշեան:



Մ. Ե. Յ. Արսլանեան Ճեմարանը կը գտնուի Անթիլիասի (**Լիբանան**) մերձակայ բլուրներէն՝ Մըզհէրի լանջին, 26000 քառ. մ. տարածութեամբ հողաշերտի մը վրայ: Կալուածին աւելի քան կէսը կը գրաւեն դպրոցին թիւ 1 եւ թիւ 2 շէնքերը, Տոքթ. Ատրինէ Գարազաշեան մարզամշակութային համալիրը եւ ՀՕՄ-ի Նորսիկեան մանկապարտեզը: Այս կառոյցները շրջապատուած են պտղատու ծառերով եւ կանաչապատ խաղավայրերով:

Ճեմարանը օժտուած է լուսաւոր դասարաններով եւ կրթական զանազան յարմարութիւններով, ինչպէս՝ գրադարաններ, էլեկտրոնային գրադարան, գիտաշխատանոցներ, համակարգչային դասարան, սահիկներու ցուցադրութեան, պատկերասփիւռի եւ տեսաերիզի սրահներ, թատերասրահ, համերգասրահ, ճատրակի սրահ, մարզասրահներ, քննութիւններու եւ հաւաքոյթներու սրահներ, խաղավայրեր, եւ այլն: Ուսուցիչներու եւ աշակերտներու տրամադրութեան տակ կը գտնուին բազմաթիւ դաշնակներ, երաժշտական գործիքներ, համակարգիչներ, պատկերասփիւռներ, լուսարձակներ, քարտէսներ...:

(Ճեմարանի պատմութեան, ուսումնական եւ վարչական կառուցուածքին, դպրոցական կանոններուն, ձեռնարկներուն եւ այլ մանրամասնութիւններու կարելի է ծանօթանալ՝ այցելելով դպրոցին կայքէջը. www.djemaran.edu.lb)

Այսուհանդերձ, Ճեմարանը կը շարունակէ կառչիլ ոսկեայ միջինի մը՝ արդի կեանքի ներգործութիւններուն մէջ: Հայեցի դաստիարակութեան մէջ խարսխուած անոր արեւելումը զայն կը վերածէ «Լաւագոյն հայկական կրթօճախ»ի: Արդարեւ, երբ 2010-ի Հոկտեմբերին Հայաստանի սփիւռքի նախարարութիւնն ու Համաշխարհային հայկական քոնկրետը այս մրցանակին յարմար կը նկատէին Ճեմարանը, անոնք մասնաւորաբար նկատի ունէին հայերէնի, հայոց պատմութեան եւ հայերէնագիտութեան տրուած տեղը դպրոցին կրթական ծրագիրներուն մէջ:

«Սկզբնական նպատակներէն հարկադրական նահանջը կը սահմանափակենք ամենակարեւոր նիւթերու դասաւանդումը պահելով պատշաճ մակարդակի վրայ,- կը լուսաբանէ Ճինսպաշեան, որ 10 տարիէ ի վեր կը վարէ Ճեմարանի տնօրէնութիւնը: - Ճեմարանը հայերէնի ու հայոց պատմութեան դասերը կը շարունակէ աւանդել կարեւոր թիւերով. նախակրթարանի մէջ կը դասաւանդուի շաբաթը 6-9 պահ հայերէն, միջնակարգի մէջ՝ 5- 6 պահ, երկրորդականի մէջ՝ 3-4 պահ: Շաբաթը 2 պահ հայոց պատմութիւն կը դասաւանդուի բոլոր դասարաններուն մէջ, մինչեւ ԺԱ. կարգ: Հայերէնի դասաւանդումը հիմքը կը կազմէ իր ուսումնական ծրագրին, հայերէնով կ'աւանդուին, որքան որ հնարաւոր է (գէթ մինչեւ Ե. դասարան) թուաբանութիւն, գիտութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, քաղաքացիական կրթութիւն, բարձրագոյն կարգերուն մէջ կը պահուին գրաբարը, մատենագրութիւնը, հայ եկեղեցւոյ պատմութիւնը, հայ քաղաքացիական կրթութիւնը, կը շարունակէ գործել Լսարանական Միութիւնը (երկրորդականի երեք դասարաններու աշակերտական միութիւնն է, որ ունի ընտրովի վարչութիւն եւ կը գործէ կանոնագրութեան մը հիման վրայ), կը հրատարակուին «Ձահակիր» ու «Կանթեղ» աշակերտներու կողմէ խմբագրուող պարբերականները»:



Ճեմարանը իր ծրագրային սահմանումով կը ձգտի արթնցնել «Հայաստանի եւ հայութեան ներկայութիւն՝ աշակերտներուն հոգեկան աշխարհին մէջ, Հայաստանի եւ Սփիւռքի լրացուցիչ ըլլալու գիտակցութիւն», «կրկնակ պատկանելիութեան գիտակցութիւն (Հայաստան եւ բնակութեան վայր)»: Այս մէկը հեշտ է ցանկալ, սակայն հայկական վարժարան յաճախող աշակերտը ինքնին մարմնացումն է սփիւռքեան առանձին իրավիճակին, անկէ բխող հարցերուն, ենթակայ է տարբեր մտայնութիւններու եւ ազդեցութիւններու: Ճեմարանի դաստիարակութիւնը անուղղակի ձեւերով կը փորձէ կամրջել վիհերը՝ նոր կազմաւորուող մատղաշ հայուն ինքնագիտակցութեան մէջ:




Մ. Ե. Գ. Արսլանեան Ճեմարանը (Նախկին Նշան Փալանճեան Ճեմարան) ուսումնական համապարփակ հաստատութիւն է. օժտուած է նախահամալսարանական ուսման բոլոր բաժիններով, մանկամտուրէն մինչեւ երկրորդականի ԺԲ. դասարան:

Ճեմարանի վկայական կը ստանան ա'յն աշակերտները, որոնք երկրորդական բաժնի երեք տարիներուն յաճախած են Ճեմարան, իբրեւ երեք տարիներու ընդհանուր միջին ապահոված են առնուազն 10/20 , իսկ հայերէնագիտական նիւթերու մէջ՝ 12/ 20: Ոեւէ աշակերտ որ չի լրացներ այս պայմաններէն որեւէ մէկը, կը ստանայ երկրորդական ուսման վկայագիր:



Գիտական հիմքերով կառուցուած, կրթական չափանիշներ լրացնող, ինչպէս նաեւ ժամանակակից նիւթեր բովանդակող հայոց պատմութեան դասագիրքերու չգոյութիւնը գլխաւոր բաց մըն է հայեցի դաստիարակութեան ծրագիրներու մէջ: Ճեմարանի տնօրէն Տիգրան Ճինպաշեան ցոյց կու տայ քանի մը օրինակ՝ իր գրասենեակը պատող դարաններուն վրայ շարուած հայոց պատմութեան արդի դասագիրքերէն, զորս հաւաքած է՝ առաւելաբար դէպի Յայաստան իր ճամբորդութիւններուն առիթով: Գոյութիւն չունի որեւէ դասագիրք, որ կը գոհացնէ մեր պահանջները, կ'ըսէ ան՝ մատնանշելով ընդհանուր թերութիւններ եւ կ'ակնարկէ Ճեմարանի մէջ միջնակարգի եւ երկրորդականի համար հայոց պատմութեան դասագիրքեր պատրաստելու կենսական ծրագրի մը:



«Յայաստան, Սփիւռք, կրկնակ պատկանելիութիւն եւ այլ հարցերը առանձին ուսումնասիրութեան նիւթեր չեն: Տրուած դասերուն, կատարուած ձեռնարկներուն ընդմէջէն աշակերտները բնականաբար իրենց ապրած երկրին իբրեւ քաղաքացի պէտք է դաստիարակուին, բայց միաժամանակ Յայաստանի գաւակ պէտք է ման, որուն զանազան դրսեւորումները կրնան այս կամ այն առիթով տարբեր սահմանումներով յայտնուիլ, սակայն այնքան ալ կարեւոր չեն յղացքային տեսակետէն, - կը բացատրէ Ճինպաշեան, որ նաեւ հայ քաղաքացիական կրթութիւն կը դասաւանդէ ԺԱ. դասարաններուն: - Քանի որ աւանդաբար կը յարգենք տեսակետներու տարբերութիւնները, գաղափարական կաղապարում չենք կատարեր: Կ'ուզենք, որ հայրենասիրութիւնն ու քաղաքացիական գիտակցութիւնը ծնին գիտութենէն ու ծանօթացումէն, ուրեմն կը ջանանք մեր դասաւանդած նիւթերուն բովանդակութիւնը հարստացնել ու դասաւանդման մեթոտները քարելաւել, արդիականացնել»:

Վերադառնալով Ճեմարանի հիմնադիրներուն տեսլականին, Ճեմարանի տնօրէնը հետեւեալ ձեւով կ'արժեւորէ հայ ազգային կեանքին մէջ ճեմարանաւարտներու ներկայութիւնը այսօր. «Առաջուան նման Ճեմարանի շրջանաւարտներուն կեսը չի դիմեր ուսուցչական ասպարէզին: Հիմա աւելի շատ «արդիական» ճիւղեր կ'ընտրեն անոնք: Սակայն ճեմարանականները ուժեղ ու ազդու ներկայութիւն են հասարակական կեանքի մէջ: Ճեմարանականները կը բնորոշուին կաղապարուած մտածողութիւնները մերժող, ազատ տրամաբանութեամբ ու պատասխանատու յանձնառութեամբ: Նման «մշակոյթ»ը բացարձակ ու համատարած չէ, սակայն բաւական տարածում գտած ոճ է»:



«Իսկ թէ ճեմարանաւարտներ ի՞նչ համեմատութեամբ նուիրուած են «Յայ Դատին» կամ «Սփիւռքի մէջ հայապահպանման, հայ լեզուին ու գրականութեան եւ հայ մշակոյթին զարգացման», կրնանք ըսել, որ սերունդէ սերունդ մեծ տարբերութիւններ կան, քաղաքական յանձնառութեան առումով համեմատութիւնը բաւական նշանակելի է (50-60 առ հարիւր), մնացեալ պարագային՝ աւելի համեստ, սակայն ոչ նուազ քան 15-20 առ հարիւրը»:

ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐ՝ ՃԵՄԱՐԱՆԻ ԴԵՏ ԻՐԵՆՑ ԿԱՊԻՆ ՄԱՍԻՆ

«Բախտը ունեցայ աշակերտելու Հայաստանի Ա. Անկախութիւնը կերտած մեծ ուսուցիչներու՝ Լ. Շանթին եւ Ն. Աղբալեանին: Անոնք Հայաստանը բերին Ճեմարան եւ կազմաւորեցին մեր նկարագիրը, ստեղծեցին ընտանեկան եզակի մթնոլորտը՝ Ճեմարանի ոգին, որ շէնքերով կարելի չէ սահմանել, որովհետեւ կ'ենթադրէ ընկերային ազատ մտածելակերպ եւ հետեւողական աշխատանք»:

Ալիս Գազանճեան (1945-ի շրջանաւարտ)

«Փայլանճեան Ճեմարան՝ ներշնչող կառոյց, օրինակելի ուսուցիչներ (Մ. Իշխան, Տիկ. Եղլանտ, Գ. Շահինեան, Յ. Քիրքճեան, Գ. Տասնապետեան, Մ. Մկրտիչեան...), ազատ մթնոլորտ, մարդակերտման տուն, հայկական օճախ»:

Արտա եւ Րաֆֆի Գարագաշեաններ (1978-ի շրջանաւարտներ)

«Ճեմարանի մէջ զգացած եմ տարբեր մթնոլորտի նոսթալժի մը: Թերեւս պայմաններու բերմամբ ստեղծուած էր անցեալի այս նոսթալժին, սակայն հետաքրքրական էր: Շնորհակալ եմ Ճեմարանին, սակայն պիտի ուզէի մաս կազմել անոր հիմնադիրներուն տեսլականով ստեղծուած մթնոլորտին եւ շարունակութեան»:

Հրակ Տեմիրճեան (2010-ի շրջանաւարտ)

ՃԵՄԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐՈՒ ՅԱՃԱԽԱԾ ԶԱՄԱՆԱՐԱՆՆԵՐ (2009, 2010, 2011)

Հայկազեան համալսարան-----18 %	ՍԵՆ Ժոզեֆ համալսարան----- 4 %
Ամերիկեան համալսարան----- 14%	Գեղեցիկ արուեստներու
Լիբանանեան ամերիկեան համալսարան-14%	լիբանանեան համալսարան ----- 3.5 %
Լիբանանեան համալսարան----- 10%	Այլ համալսարաններ----- 2.5%
Քասիքի Ս. Հոգի համալսարան----- 7.5 %	Երկրէն դուրս----- 3.5%
Նոթրը Տամ համալսարան----- 4%	Անորոշ, առկախ կամ անյայտ-----19%

ԱՍՊԱՐԷՉՆԵՐ

Առեւտրական գիտութիւններ	21%
Ընկերային գիտութիւններ	20%
Գիտական մարզեր	14%
Արուեստներ	11.5%
Ճարտարապետութիւն	6%
Անորոշ	27.5%

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարի	Ֆրանսական եւ Լիբանանեան պաշալորեաներ (%)	Պրեօվէ (%)
2009	85.71	89.1
2010	92.98	87
2011	91.8	91.9
2012	95.7	86.6

ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԻ ՕՐ



Ամեն տարուան Հոկտեմբերին Ճեմարանը երկրորդականի վերջին երկու կարգերուն համար կը կազմակերպէ Ուսման կողմնորոշումի օր (Օրինեթէշըն տէյ): Երիտասարդ ճեմարանաւարտներ կը փոխանցեն տեղեկութիւններ՝ իրենց ընտրած մասնագիտութեան վերաբերեալ եւ կը խօսին իրենց փորձառութեան մասին:

Ճեմարանը կը կազմակերպէ նաեւ հանդիպումներ՝ Լիբանանի գլխաւոր համալսարաններու ներկայացուցիչներու եւ ամառական դասարաններու աշակերտներու միջեւ, որպէսզի անոնք լուսաբանութիւններ լսեն համալսարան մուտքի պայմաններու մասին:

ՆՈՐՍԻԿԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՂՏՐԻԿ ԲՈՅՆ ՄԸ



Մանուկներու կազմաւորումին մէջ վճռորոշ դեր ունին մանկապարտեզի տարիները: Այստեղ տիրող մթնոլորտը իր անժխտելի ներգործութիւնը կ'ունենայ ապագայ սերունդներու դաստիարակութեան մէջ: Ի՞նչ են այն չափանիշները, զորս կը լրացնէ Մ. Ե. Գ. Արսլանեան Ճեմարանի Նորսիկեան մանկապարտեզը՝ ներշնչելով վստահութիւն եւ որակ:

«Հինէն ի վեր լա՛ւ մանկապարտեզ եղած է Ճեմարանի մանկապարտեզը: Ասիկա կը պարտինք Լուսին Մալիքեանին եւ Գարմէն Տէր Կարապետեանին, որոնք լաւ պատրաստութեան տեր մանկավարժներ էին: Լեզու, գիտութիւն եւ թուաբանութիւն սորվեցնելէ անդին՝ անոնք յաջողեցան ազգային ճառագայթող ոգիով ստեղծուած լաւ ծրագիր մը կիրարկել,- կը բացատրէ Ճեմարանի տնօրէն Տիգրան Ճինպաշեան:- Այդ աւանդութիւնը կը շարունակուի Մըզհէրի մէջ, եւ դժուար չէ տեսնել, թէ ինչպէ՛ս. մանկապարտեզը՝ քանի մը հարիւր փոքրիկներու համար ստեղծուած ճարտարապետական իր գեղեցիկ կառոյցով, բլուրին լանջին շուրջ 6000 քառ. մ.ի վրայ տարածուած իր միայարկ շէնքերով, խաղավայրերով եւ պարտեզներով սքանչելի միջավայր մըն է մանուկներուն համար»:

Ճինպաշեան գոհունակութեամբ կը նշէ, թէ մանկապարտեզը օժտուած է որակեալ ուսուցիչներով, որոնց աւելի քան կէսը համալսարանաւարտ է: Անոնք կը գործադրեն մանկավարժական եւ գիտական հիմքերով պատրաստուած ծրագիրներ: «Այս ծրագիրները մեր ջանքերով հայացուած են, պատշաճեցուած են հայ մանուկին լեզուին ու հոգեբանութեան», կ'ընդգծէ Ճինպաշեան:

ԱՐԴԻՎԿԱՆ ՆՈՐ ԽՈՅԱՆՈՑ



Մ. Ե. Գ. Արսլանեան Ճեմարանի Նորսիկեան մանկապարտեզի արդիական խոհանոցը կառուցուեցաւ 2010-ին՝ բարերարութեամբ՝ Տէր եւ Տիգրան Վրէժ եւ Սալմա Սապունճեաններու եւ Տէր եւ Տիգրան Ստեփան եւ Թամար Տէր Պետրոսեաններու:

Խոհանոցին բացումին առիթով Ճեմարանի տնօրէն Տիգրան Ճինպաշեան Նորսիկեան մանկապարտեզը որակեց «Լիբանանի լաւագոյն մանկապարտեզներէն մէկը»:

ՆԿԱՐԱԳԻՐԻ ԿԵՐՏՄԱՆ ՅԵՏԵՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Ճեմարանի համակրթական ծրագիրը կը նպաստէ աշակերտներուն առողջ նկարագրի կազմաւորումին եւ պատասխանատու քաղաքացիի կերտումին, կ'իրագործուի տարբեր մակարդակներով եւ կ'ընդգրկէ տարբեր նիւթեր, ինչպէս՝ ընկերասիրութիւն, գործակցութիւն, կարեկցութիւն, եւայլն: Համակրթական ծրագիրին մաս կը կազմէ նաեւ կրթական տարբեր օրուան մը կազմակերպումը՝ հաճելի եւ դաստիարակիչ մթնոլորտի մը մէջ:

ԲՈՒՆԱՅՈՒՄԻ ԵՒ ԾԽԱԽՈՏԻ ԴԵՄ

Դպրոցը 2011-2012 տարեշրջանին ձեռնարկեց յատուկ արշաւի մը՝ բռնացումի եւ բռնադատումի դէմ: Նախակրթարանի բոլոր աշակերտները այս մասին իրենց մտածումները, զգացումներն ու փորձառութիւնները նկարագրեցին գրութիւններով եւ գծագրութիւններով, որոնք հետագային ցուցադրուեցան բոլորին:

Նախորդ տարեշրջանին միացեալ արշաւը ծխախոտի գործածութեան դէմ էր: Տարրականէն մինչեւ երկրորդական մէկ ամսուան վրայ երկարող դասարանային աշխատանքները ի վերջոյ յանգեցան Ճեմարանը ծխախոտէ գերծ միջավայր դարձնելու տնօրէնութեան որոշումին:

ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐ, ԿԵՆՍՈՒՐՏԻ ՕՐ

Ճեմարանը 2011-2012 տարեշրջանին կազմակերպեց Մարզական օր, որուն ընթացքին մանկապարտեզէն մինչեւ երկրորդականի աշակերտներ մասնակցեցան մարզական խաղերու, մարզական առողջ ոգին ընկալելու եւ ամրապնդելու մեկնակետով:

Նախորդ տարեշրջանին Ճեմարանը կազմակերպած էր Կենսոլորտի օր, որուն ընթացքին աշակերտները կատարեցին մաքրութեան արշաւներ եւ անոնց փոխանցուեցաւ կենսոլորտը մաքուր պահելու դաստիարակութիւնը:

«Նման ծրագիրներու իրագործումին մէջ իրենց սիրայօժար ներդրումը կը կատարեն ուսուցիչներ, տղեալ նիւթերու մէջ մասնագիտացած Ճեմարանի ծնողներ, բարեկամներ կամ հիւրեր», կ'ըսէ Ճեմարանի ուսումնական-կրթական տեսուչ Հուրի Եափուճեան:



ԴԱՍԱԲԱՆԴՈՒՄԻ ՆԱԽԱԳԻԾԵՐՈՒ «ՇՏԵՄԱՐԱՆ» ՄԸ

Ներկայ տարեշրջանին Ճեմարանը կեդրոնացած է դասանիւթերու ուսուցման մանրամասն եւ համապարփակ նախագիծերու պատրաստութեան ծրագիրի մը վրայ: «Պակսեցուցած ենք համակարգողներուն դասապահերը, որպէսզի անոնց աշխատանքը աւելի կազմակերպուած ձեւով ընթանայ իրենց ստանձնած դասանիւթերուն մէջ», կ'ըսէ Ճեմարանի տնօրէն Տիգրան Ճինպաշեան: Համակարգողներուն պարտականութիւնն է իւրաքանչիւր ուսուցիչէ պահանջել եւ հետեւիլ, որ իր դասերը բաժնէ տարուան վրայ, այնպէս, որ իւրաքանչիւր դասապահի ծրագիրը պատրաստէ սկիզբէն եւ զանոնք ներկայացնէ պարբերաբար: «Դժուար աշխատանք մըն է այս, սակայն տարիներու ընթացքին կը կազմաւորուի դասաւանդումի գործնական ծրագիր մը եւ կ'ունենանք շտեմարան մը», կը բացատրէ Ճինպաշեան, նշելով, որ կարելի է ժամանակի ընթացքին փոփոխութիւններու ենթարկել որոշ ծրագիրներ, համաձայն՝ դասաւանդումի ձեւերուն: Մօտիկ ապագային «լայն չափերով աւարտած կ'ըլլանք այս ծրագիրը», կ'ըսէ ան խանդավառութեամբ:

ՈՒՂՂԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԿԻՐԱՐԿՈՂ ԼԻՔԱՆԱՆԱՅԱՅ ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ



Այսօր բազմաթիւ դպրոցներու մէջ կը գործեն հոգեբաններ, ընկերային ծառայողներ եւ ուղղավարժներ (օրթոփետակոկ): Տարիներէ ի վեր Ճեմարանը արդէն ունէր ընկերային ծառայող եւ հոգեբան: 2011-2012 տարեշրջանին դպրոցը հիմնեց նաեւ ուղղավարժական կորիզ մը՝ երկու մասնագետ ուղղավարժներով:

Ուղղավարժութիւնը (օրթոփետակոճի) այն գիտութիւնն է, որ կը յայտնաբերէ դժուար կեդրոնացող եւ սորվող աշակերտները եւ կը փորձէ յատուկ աշխատելաձեւերով լաւագոյնս հունաւորել անոնց կարողալու, գրելու, հաշուելու եւ միտքը արտայայտելու կարողութիւնները:

Ուղղավարժական համակարգը կը գործէ կրթական ծրագիրներուն համապատասխան: «Ճիշդ է, որ այս ծառայութիւնները նիւթական յաւելեալ պարտաւորութիւններու տակ կը դնեն կրթական հաստատութիւնները, սակայն անոնք նաեւ իրենց անվիճելի օգտակարութիւնը կ'ունենան դժուար սորվող մանուկներուն, մանաւանդ, երբ ախտաճանաչումը կը կատարուի փոքր տարիքէն», ինչպէս կը բացատրէ Ճեմարանի ուսումնական-կրթական տեսուչ Հուրի Եափուճեան:

ՃԵՄԱՐԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՎ ԿԸ ԲԱԶԱԼԵՐԷ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ



Տարեվերջի հանդեսին Ճեմարանի տարբեր բաժանմունքներու փայլուն աշակերտները կը ստանան գնահատական մրցանակներ:

Մրցանակի կ'արժանանան այն աշակերտները, որոնք ապահոված են բարձրագոյն ընդհանուր միջին, լաւագոյն արդիւնք արձանագրած են գիտական, գրական, հայերէնագիտական կամ արաբերէնի դասանիւթերուն մէջ:

Յատուկ մրցանակներ կը տրուին հանրային գործունեութիւն ունեցող եւ գերազանց արդիւնքով աշակերտին, «Ջահակիր»ի պատրաստութեան մէջ լաւագոյն մասնակցութիւնը ցուցաբերած աշակերտին, անթերի վարք ու բարքով ծառայասէր աշակերտին, տիպար մարզիկին եւ մարզիկուհիին:

ԿՐԹԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄ



Համաշխարհային վարկ վայելող կրթական դեմքեր այսօր կը հաստատեն, թէ բարգաւաճ երկիրներու մէջ ներկայ ժամանակներու կրթական համակարգը այլեւս ժամանակավրէպ է, որովհետեւ հիմնուած է 18-րդ դարու Լուսաւորութեան ժամանակաշրջանի մշակոյթին եւ 19-րդ դարու ճարտարարուեստական յեղափոխութեան սկզբունքներուն վրայ: Ճեմարանը կը գիտակցի, թէ «բոլոր համակարգերուն պէս կրթական համակարգն ալ կը հիննայ եւ պարբերաբար վերակառուցման կը կարօտի», ինչպէս կ'ըսէ Ճեմարանի ուսումնական-կրթական տեսուչ Հուրի Եափուճեան:

«Ժամանակի թաւալումին հետ կարգ մը ընդունուած արժեքներ տեղի կու տան նորերուն: Չուզահեռաբար, կրթութեան գիտութիւնը նոր ուղիներ կը փնտռէ, իր խորքով ու ձեւով, որպէսզի կարողութեան տարբեր շերտերով օժտուած անձեր արժեւորուին իրենց տարբերութեան համար,- կը բացատրէ ան:- Այս պատճառով է, որ կրթական ծրագիրները յաճախ կը վերանայուին (գարգացած երկիրներու պարագային) եւ ուսուցման նիւթերն ու անհրաժեշտ հմտութիւնները կ'որոշուին՝ արդի կեանքի կարիքներուն եւ մարտահրաւերներուն համեմատ»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ



Ճեմարանի ուսումնական հայեցակարգը ներշնչուած է ֆրանսականէն, կ'ընդգրկէ Լիբանանի ուսումնական պետական ծրագիրները, սակայն նաեւ կը կարելորէ հայերէնի, հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի դասաւանդումը:

Իսկ Ճեմարանը ի՞նչ չափով բաց է կրթական մեթոտներ շրջելու եւ ժամանակակից նոր կամ յեղաշրջող մօտեցումներ որդեգրելու դիմաց:

«Ճեմարանը հայեցի դաստիարակութեան կողքին Լիբանանի կրթական ծրագիրը կը գործադրէ՝ արժեւորելով ու խթանելով աշակերտներուն քննական մտքի զարգացումը եւ ստեղծագործական ոգին: Ճեմարանը կը շարունակէ մնալ այն ուղիներուն մէջ, որոնք աշակերտին «սորվիլ կը սորվեցնեն» եւ ինքնուրոյն ձեւով կայանալու կ'առաջնորդեն,- կ'ըսէ Եափուճեան:- Իսկ երկրորդականի մէջ ֆրանսական պաշալորեայի պատրաստութիւնը նոր հորիզոններ կը բանայ աշխարհը ընկալելու, երեւոյթները իրարու կապելով հասկնալու եւ մեկնաբանելու կարողութեան տեսակետէն»:

Աշակերտին մէջ իրերը ոչ կրաւորական, այլ՝ հաւասարակշռուած ազատութեամբ եւ քննական ակնոցով դիտելու կարողութիւն մը զարգացնելը կը մնայ Ճեմարանի կրթական քաղաքականութեան գլխաւոր նպատակը:

«Կրնանք հաստատ ըսել, որ աշակերտին գործօն մասնակցութիւնը ապահովելու համար դասաւանդման մեթոտները գործօն դարձնելու հետեւողական աշխատանք կայ Ճեմարանի մէջ: Մեր ուսուցիչները պարբերաբար վերաորակաւորման դասընթացքներու կը հետեւին կամ մանկավարժական սեմինարներու կը մասնակցին: Ճեմարանի կրթական ծրագիրը վերամշակուեցաւ՝ գայն խթանող դիտանկիւնէ մը կիրարկելու համար: Պետական որոշումով ամրագրուած կրթական ծրագիրները աշակերտներուն կը մատուցուին՝ «ինչը», «ինչուն» եւ «ինչպէսը» աշակերտէն արտաբերելու մտադրութեամբ, եւ ոչ թէ՛ իրմէ պատրաստի պատասխաններ հայցելու», կ'ըսէ Եափուճեան, որ նաեւ կը վարէ Ճեմարանի գիտական նիւթերու համադրողի պաշտօնը:

Ճեմարանի դասարանները միջին հաշուով կը բաղկանան 20-25 աշակերտներէ, ինչ որ կը նպաստէ ուսուցիչ- աշակերտ աւելի կենսունակ յարաբերութեան: «2010-2011 տարեշրջանին տարրական Ա. կարգի համար որդեգրեցինք 15-17 աշակերտներէ բաղկացած փոքր դասարաններ, որպէսզի փոքրերուն սորվելու ընթացքը եւ ամրապնդումը աւելի արդիւնաւետ ըլլան», կ'աւելցնէ Եափուճեան:



Յետեւաբար ի՞նչ կը պատահի տասնհինգ տարի Ճեմարան յաճախող աշակերտի մը կարողութիւններուն:

«Երբ դասաւանդման մեթոտները ճիշդ ձեւով մտածուած եւ ծրագրուած են, աշակերտներուն զգալու, մտածելու եւ աշխատելու կարողութիւնները կը խթանուին եւ անոնց իւրայատուկ կարողութիւնները ինքնաբերաբար կը յայտնաբերուին,- կը բացատրէ Եափուճեան:- Ուսուցման մեթոտները պետք է այնպէս ծրագրուին եւ այլազանուին, որ բոլոր տիպի սորվողները օգտուին անոնցմէ, եւ ասիկա է, որ կը բարդացնէ արդի ուսուցման ասպարեզը»:

Հակառակ այս մարզը կատարելագործելու ճիգերուն, աշխարհի տարածքին հետզհետէ կը բազմաւան կեդրոնացումի խանգարումէ տառապող աշակերտները, որովհետեւ կարգ մը մանկավարժներու համաձայն, կրթական համակարգը այլեւս չի յաջողիր հետաքրքրել տեղեկութիւններու թուային (տիճիթըլ) անսպառ աղբիւրներու տարափին ենթակայ մանուկներն ու պատանիները: Եափուճեան համոզուած է, որ «ըթենշըն տեֆիսիթ հայփրէքթիւիթի տիտորտըրի առկայութիւնըարդի ընկերութեան վնասներէն մէկն է»: Իսկ Ճեմարանը «որոշ լուծումներ կ'առաջարկէ այս դժուարութեան մէջ գտնուող աշակերտներուն, բայց դարմանը կը գտնուի ընտանիքին եւ ընկերութեան արժեքային համակարգին մէջ»:

Ճեմարանը արդեօք կը պատկերացնէ՞ արհեստագիտական միջոցներով դասաւանդումի վրայ հիմնուած ապագայ մը եւ ուսուցիչ-աշակերտ յարաբերութեան նոր մակարդակ մը, երբ յայտնապէս նոր սերունդը աւելի լաւ կը հասկնայ եւ կը մտածէ արհեստագիտական թուային գործիքներով:

«Արհեստագիտական միջոցներով դասաւանդելու փորձը արդէն քայլ առ քայլ ներս կը մտնէ Ճեմարանէն ներս: Այս փորձը երկար տարիներու վրայ պիտի ամրապնդուի:



Սակայն թուային գրատախտակի արդիւնաւետ գործածութիւնը կախեալ է զայն ճիշդ գործածելու ձեւէն ու չափէն», կ'ընդգծէ Եափուճեան, որ կ'ընդունի անոր առաւելութիւնները, ինչպէս՝ ուսուցիչ-աշակերտ հաղորդակցութեան որակի «ճոխացում», դասարանին մէջ սխալներ սրբագրելու կամ անկարգապահութիւններ զսպելու «կորսուած ժամանակ»ի խնայողութիւն: Սակայն «ուսուցումը կախեալ է աշակերտին միտքը խթանելու ուսուցիչին կարողութենէն եւ ոչ թէ՛ դասարանը արհեստագիտական նորագոյն միջոցներով օժտելէն», կ'եզրակացնէ ան:

Իսկ ի՞նչ պայմաններ պետք է լրացնէ ուսուցիչ մը, որպէսզի պաշտօն ստանձնէ Ճեմարանի մէջ: Եափուճեան կը բացատրէ, թէ Ճեմարանը առաջնահերթութիւն կու տայ այն ուսուցիչներուն, որոնք պսակաւորի մակարդակով եւ ուսուցման վկայականով մասնագիտացած են այն նիւթին մէջ, որ պիտի դասաւանդեն: «Կարելոր է նաեւ թեկնածու ուսուցիչին նախկին փորձառութիւնը եւ հարցազրոյցի ընթացքին անոր ինքնավստահութիւնն ու պատրաստակամութիւնը՝ ուսուցչական ասպարեզին նկատմամբ», կ'ընդգծէ ան:

Ճեմարանի մէջ կը քաջալերուին արուեստներն ու մարմնակրթանքը: Դպրոցը աշխուժ մասնակցութիւն կը բերէ արտադպրոցական մրցանքներու, գեղարուեստական եւ մարզական իրադարձութիւններու, կը կազմակերպէ տարբեր դասարաններու պատշաճ դաստիարակչական այցելութիւններ, կը հիւրընկալէ արուեստագետներ, մտաւորականներ, ազգային եւ կրթական գործիչներ, հայ թէ օտար պաշտօնականներ կայացուցիչներ: Այս բոլորը կը նպաստեն ընդարձակելու աշակերտներուն հորիզոնները՝ իրենց ակադեմական ուսումէն անդին: Ճեմարանի տնօրէնին մէկ վկայութեամբ՝ անոնք կարելոր տեղ կը գրաւեն դպրոցին «Լաւագոյն հայկական կրթօճախի» ընտրութեան մէջ:

ԾՆՈՂՆԵՐ՝ ԾԵՄԱՐԱՆԻ ԻՐԵՆՑ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Ճեմարանը աշակերտներուն կը ներշնչէ ինքնավստահութիւն՝ որոշումներ առնելու, ազատ կարծիքներ արտայայտելու: Մեր զաւակները միշտ հպարտ կը զգան Ճեմարանի պատկանելիութեամբ: Ձեռով մը ճեմարանը հարազատ ընտանիք մըն է իրենց համար, ինչ որ մասամբ կը պարտին իրենց ուսուցիչներուն»:

Նելլի Աղասարգիսեան

«Թէեւ յաճախած եմ Շանվիլ, եւ կրնայի զաւակներս ուղարկել հոն, սակայն առանց որեւէ ճնշումի որոշեցի ուղարկել Ճեմարան, հաւատալով, որ հոն կը ստանան ամբողջական կրթութիւն իբրեւ հայ եւ իբրեւ մարդ: Ճեմարանը տուաւ այս բոլորը եւ փոխանցեց ազատ մտածելակերպ»:

Ստեփան Տէր Պետրոսեան

«Ակնկալութիւններս գոհացած են հայեցի եւ ազգային կրթութեան դիտանկիւնէն, եւ այս՝ առանց պետական ծրագիրներու մէջ զիջումներու, պետական եւ ֆրանսական պաքալորէայի քննութիւններու մէջ լաւ յաջողութիւններով: Ճեմարանը եզակի երեւոյթ է, ուր ձեռով մը մէկտեղուած են այս երեքը»:

Տոքթ. Պերճ Տաքտեան

ՏՈՔԹ. ԱՏՐԻՆԷ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ ՄԱՐԶԱՄՇՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԶՈՅԱԿԱՊ ՄՐԱՅԸ



Տոքթ. Ատրինէ Գարագաշեանի 200 հազար ամերիկեան տոլարի իշխանական նուիրատուութեամբ՝ 2010-ին իրականացաւ Ճեմարանի կարիքները գոհացնող մարզամշակութային կառոյցի մը շինութիւնը, որուն ամբողջացումին մէջ իրենց ներդրումը ունեցան նաեւ դպրոցի բարերար Արսլանեան ընտանիքը՝ 100 հազար տոլարով, Տէր Եւ Տիկին Նազարէթ եւ Պայծառ Գարագաշեանները՝ 50 հազար տոլարով:

Կառոյցին բացումին առիթով տոքթ. Գարագաշեան հաստատեց, թէ «մարդ տալով կը հարըստանայ, անանձնական ուրախութիւն փոխանցելով կ'ունենայ հոգեկան գոհունակութիւն»:


Տոքթ. Ատրինէ Գարագաշեանի անունը կրող սրահը կը ծառայէ իբրեւ մարզադաշտ, ձեռնարկներու սրահ եւ ժողովասրահ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԱՇԵՐՏ ԱՐԽԻՒՆԵՐՈՒՆ ՄԵՋ՝ ՃԵՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ...

Պատմությունը ընդհանրապես կը յիշուի հակիրճ վերնագիրներով: Իսկ ինչ որ կ'ապրուի իբրև առօրեայ մտորում, զգացում եւ տազնապ, իր տարբերակը կը հիւսէ արխիւներու լռութեան մէջ:


Համազգայինի արխիւները վերադասաւորուեցան 2011-ին: Ճեմարանի կապուած նիւթերու փնտռտուը մը անոնց մէջ ի յայտ կը բերէ անկեղծ խոստովանութիւններ, հաճելի դրուագներ, մտաւորական դեմքերու գործնապաշտ նուիրումի ապացոյցներ:

(Համազգայինի արխիւներէն ստորեւ կատարուած մէջբերումները կը վերարտադրենք լեզուական հարազատութեամբ):




Մեծ Եղեռնը ամայացուցած է Արեւմտահայաստանը, Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը քայքայուած է, Լեւոն Շանթ (գրագետ, նախկին փոխ նախագահ՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան խորհրդարանի) ապաստանած է Ֆրանսա, կը տառապի առողջական հարցերէ եւ հոգեպէս ընկճուած է: 27 Օգոստոս 1922-ին Սիմոն Վրացեանի (նախկին վարչապետ՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան) ուղղուած նամակի մը մէջ ան կը գրէ.

«Պարապութիւնը աւելի է սրում կեանքէ ու աշխատանքէ կտրուած լինելու զգացումն եւ այն խո՛ր, խո՛ր կարօտը դէպի մեր դժբախտ հայրենիքը: Հիմա իմ աչքիս առջեւ ոչինչ չի գալիս: Կ'ուզէի լինեմ ու աշխատեմ մեր աւեր աշխարհում: Երբեք այսպէս ուժեղ չէի զգացած հայրենի միջավայրի ու հայրենի հողի պահանջը»:



Նիկոլ Աղբալեան (գրաքննադատ, նախկին կրթութեան նախարար՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան) Լեւոն Շանթի հետ Գահիրէէն կ'ուղղուի Պէյրութ՝ հիմնելու համար Հայ Ճեմարանը: Ան 29 Յուլիտեմբեր 1929-ին Համօ Օհանջանեանին (նախկին վարչապետ՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան) ուղղուած նամակի մը մէջ ամենայն պարզութեամբ կը նկարագրէ.

«Երէկ հասանք Բէյրութ: Նաւին վրայ հարց ու փորձ առին ինձ ու Շանթին թէ ով ենք եւ ինչու Բէյրութ պիտի մնանք: Բացատրեցինք, որ վարժարան պիտի բանայ Շանթը եւ ես դասատու հրաւիրուած եմ»:




Նիկոլ Աղբալեան 6 Յուլիս 1931-ին Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Համօ Օհանջանեանին կը ներկայացնէ նորաբաց Ճեմարանի նիւթական ծանր վիճակը, միաժամանակ՝ վերահաստատելով իր հաւատքը:

«Մենք ամեն օր զգում ենք մեր ձեռնարկած գործի կարելորութիւնն ու մեծութիւնը եւ այն ազդեցութիւնը, որ անում է հանրութեան վրայ...: Վստահ եմ, որ մեր գործի բարեկամները մեզ կը հանեն այս նեղ կացութիւնից եւ հնար կը տան շունչ քաշելու»:




Համազգայինի արխիվներուն մէջ միակ լուսանկարը, ուր Լեւոն Շանթ եւ Նիկոլ Աղբալեան նկարուած են Հայ Ճեմարանի շրջանաւարտներու հետ (Ն. Աղբալեանի արխիվներէն 5 Յունիս 1938):

Լեւոն Շանթ (նստած՝ ձախին), Նիկոլ Աղբալեան (աջին):




Լեւոն Շանթ 1939-ի Յունիսին «Հայ Ճեմարանի վարչութեան անուսով» իբրեւ տեսուչի օգնական եւ դասատու կը հրաւիրէ Սիմոն Վրացեանը (Ամերիկայէն).

«Ես ալ Նիկոլն ալ սրտանց ուրախ կ'ըլլանք քու ներկայութենէն ու աշխատակցութենէն...: Երբ որ գաս, միասին կ'որոշենք, թէ ինչով կարող ես ինծի օգնել...: Գիտցած եղիր, որ քու գրական եւ այլ աշխատասիրութիւններուն համար ալ բաւական ժամանակ կ'ունենաս»:



Մուշեղ Իշխան (գրագետ եւ ուսուցիչ) Սեւրի մէջ (Ֆրանսա) կը հետեւի մանկավարժական դասընթացքի մը եւ 16 Սեպտեմբեր 1960-ին իր փորձառութեան մասին կը գրէ արդէն Նշան Փալանճեան անունը կրող Ճեմարանի տնօրէն Սիմոն Վրացեանի.

«Ճեմարանի մէջ կիրարկուածներուն հետ բաղդատելով մեծ նորութիւններ չկան. աշակերտը մղել աշխատանքի, աշակերտին գիտակցութիւնը զարգացնել, նախաձեռնութեան ոգի տալ անոր, կեանքէն չկտրել, անհատականութիւնը շեշտել, եւայլն»:



Սիմոն Վրացեան 11 Յունիս 1963-ին Արժանթինի Խրիմեան Ազգ. վարժարանի հոգաբարձութեան կ'ուղարկէ նամակ մը՝ հանգանակութեան նպատակով ճամբորդութիւն մը յստակացնելու համար: Ան նուրբ երգիծանքով կը գրէ.

«Իմ այս ճամբորդութիւնը պիտի սահմանափակուի միայն դպրոցի եւ հայապահպանութեան հետ կապուած մշակութային գործերով: Ուրիշ ոեւէ յանձնառութիւն պիտի չունենամ: Հետեւաբար կը խնդրեմ, որ այդ սահմաններէն դուրս, արտաքին-ցուցական ձեռնարկներ չկապէք իմ ճամբորդութեան հետ: Կու գամ սոսկ իբրեւ վարժապետ եւ ոչ որպէս նախկին վարչապետ»:

«Ո՞Վ Է ՀԱՅԸ...»

«Եւ սգային ամենայն ազատք՝ շինականք ծագէ ի ծագ ամենայն երկրին Հայոց, ազատք՝ շինականք ամենայն բնակիչք տան Թորգոմայ, հայ լեզուն առհասարակ»:

Փաւստոս Բիւզանդ

Փաւստոս Բիւզանդ Ե. դարուն հայ կը համարէր հայերէն խօսողները եւ Հայաստանի սահմանները կ'որոշէր հայոց լեզուի տիրապետութեան համեմատ: Յ. Պալեանի 2010-ի մէկ յօդուածին մէջ Արմէն Այվազեանի «Հայկական ինքնութեան հիմնաքարերը» գիրքէն կատարուած այս մէջբերումը մտածել կու տայ, որ թերեւս շատ բան կամ՝ ոչինչ փոխուած է հայութիւնը հայախօսութեամբ բնորոշելու մէջ: Մինչ 2010-ին Եունեսքօ արեւմտահայերէնը կը ցանկագրէր աշխարհի վտանգուած լեզուներուն շարքին, անդին՝ հայ հրապարակագրութեան մէջ աւելի կը սրէր նախապէս սկիզբ առած անուղղակի բանավեճ մը.

Հայերէնը ի՞նչ չափով կը պայմանաւորէ հայկական ինքնութիւնը այսօր:

Եւ դեռ, վերջերս հետզհետէ աւելի կը գրուի եւ կը խօսուի Թուրքիոյ մէջ ապրող մեծ թիւով իւլամացած հայերու մասին, որոնք թրքախօս են եւ կը կրեն թրքական անուններ. ոմանք ծածուկ կը շարունակեն պահել իրենց քրիստոնէական ավանդութիւնները, իսկ շատերը իրենց գոյութիւնը կ'ապրին իբրեւ իսլամ: Կարելի է մտածել, թէ այս երեւոյթը եւս ապագային իր ներգործութիւնը պիտի ունենայ հայկական ինքնութեան բանավեճերուն մէջ:

Մեր այս տեղեկատուին մէջ կը ներկայացնենք յապաւուած քաղուածքներ յօդուածներէ, հարցազրոյցներէ եւ ուսումնասիրութիւններէ, որոնք կ'ուրուագծեն հայկական ինքնութեան բնորոշումին մէջ լեզուական գործօնին շուրջ վեճը:*

Ռգիւո՞վ հայ

Կրօնո՞վ հայ

Մշակոյթո՞վ հայ

Աւանդութեա՞մբ հայ

Լեզուո՞վ հայ

Կամբո՞վ հայ

Արժէքներո՞վ հայ

Ազգութեա՞մբ հայ



*Ընթերցողներ կրնան մասնակցիլ այս քննարկումին եւ իրենց կարծիքները տեղադրել Համազգայինի կայքէջին մէջ: Հասցէ՝ www.hamazkayin.com

qrcode-ի կապ:



Եթէ հայերէն չխօսեցար, հայերէնով չմտածեցիր, հայերէն չգրեցիր, քու մարդկային նկարագիրդ ինքնաբերաբար կ'աղաւաղուի:

ՓՐՈՖ. ԿԻՄ ԱՂԱԲԵԿԵԱՆ, գրականագէտ (Երեւան)



Ո՞վ է հայը... Մեզմե ոմանք յստակ պատասխան կու տան, թե հայը ա՛յն անձն է, որ անպայմանօրեն հայերեն կը խօսի: Այս սահմանումը կը գտնենք շատ նեղ: Հայը այն տարրն է, որ հայկական մշակոյթի տարրեր ունի իր ինքնութեան մէջ եւ կը զգայ, որ ինք հայ է: Հայ զգալը կրնայ ըլլալ գիտակցական կողմնորոշումով... Մենք չենք ուզեր մերժել հայ ըլլալը Արեւմուտքի մէջ ապրող ա՛յն անձին, որ հայերեն չի խօսիր, սակայն ինքզինք հայ կը զգայ, գիտակցական կողմնորոշումով ընտրած է հայութեան ուղին, իր մէջ ունի հայկական մշակութային որոշ տարրեր եւ կ'ուզէ մօտենալ հայութեան, կ'ուզէ մասնակցիլ հայութեան երթին: Ազգ հասկացողութիւնը պետք է ըմբռնել որպէս մշակոյթ... Մենք պետք չէ զբաղինք անուանակոչումներով, օրինակ՝ «Եթէ հայերեն չի խօսիր, հայ չէ» տրամաբանութիւնը սխալ է:

ՎԱԶԷ ՓԱՓԱՉԵԱՆ, ատենապետ՝ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան (Պէյրուք)



Պարզ է, այսօր մեզի պարտադրուածը, ոչ իբր ուրախալի կամ ցաւալի, այլ պարզապէս իբր սուկական իրողութիւն, վաղուան անդրպետական հայու, մոլորակային հայու տիպարն է, ազգութեան լայնագոյն պատկերացում - սահմանումի մը համապատասխանող: Անիկա պարտի ընդգրկել, ներկայ հայրենի տարածքի եւ Արցախի ու Ջաւաքի հայութենէն անդին՝ աւանդակոչուած Սփիւռքը - հայախօս թէ օտարախօս, բայց քաղաքական դատի յանձնառութեան հսկայ կարողականութեամբ օժտուած. յաճախ լեզուի ու մշակոյթի ճանաչումէն զրկուած, բայց Հայաստանի վերաշինութեան զինուորագրուած: Ընդգրկել նոյնիսկ՝ ըստ ծագումի կէս կամ քառորդ հայ, բայց ինքզինք հայ զգացող սփիւռքահայը (քանի այսօր հայեցիութիւնը ժառանգական-բնագոյնականէն աւելի՝ գիտակցական հայեցիութիւն է...): Ընդգրկել ԱՊՀի անսահման տարածքին կամ արտաքին Սփիւռքի մէջ նոր-սփիւռքի դարձած «հայաստանահայ»ը: Ու դեռ, վաղը, անիկա պետք է ատակ ըլլայ ընդգրկելու հայութեան նոր (ու շա՛տ հին) զանգուած մը եւս.- 1915էն ի վեր հարկադրաբար օտարալեզու եւ կրօնափոխ, թաղուած՝ Արեւմտահայաստանի ամայնքներուն մէջ, ու հաւանօրեն վերը նշուած մեծ խումբերուն չափ պատկառելի համրանքով...:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԻՐԶԵՏԵԱՆ, գրականագետ (Աթէնք)



Բաբելական բոլոր լեզուներով ապրող, խօսող եւ գրող «ծագումով հայ»երով ազգ կը գոյանա՞յ, կը պահուի՞... Չենք հարցնել անգամ՝ ի՞նչ ընելու եւ ո՞ւր հասնելու համար:

ՅԱԿՈՐ ՊԱԼԵԱՆ, խմբագիր՝ Համազգայինի «Բագին» գրական թերթի (Պէյրուք)



Զմոռնանք երբեք, որ լեզուն կրնայ յաղթահարել ժամանակը, սակայն չի կրնար յաղթահարել հողի, ոգիի ու միջավայրի բացակայութիւնը: Լսեցի պատճառաբանութիւններ, թէ կարելի՛ է, եւ ինչու՞ չէ, ըլլալ «լաւ հայ»՝ առանց հայերէն գիտնալու: Գործնականապէս այսօր կայ հայ ինքնութեան եւ գոյութեան նոր հասկացողութիւն եւ սահմանում: Եւ իբրեւ արդիւնք՝ հաստատուած է օտարալեզու հայկականութեան օրինականութիւնը: Կրօնին եւ ազգային արժէքներու կարգին, լեզուն այլեւս չունի այն գոյութեանական դերը, որ աւանդն է Ե. դարուն: Արեւմտահայերէնը հայ մշակոյթին ու հոգիին լեզուն չէ, այս է գոյութեանական խնդիրը:

ՓՐՈՖ.ՍԵՂԱ Պ. ՏՍՏՈՅԵԱՆ, դասախօս (Նիւ Եորք)



Ստիպուած ենք ընդունիլ, որ այսօր Հայաստանէն դուրս, այսինքն՝ Սփիւռք կոչուած լայն տարածութեան վրայ մեր ազգային հաստատութիւններն ու մեր եկեղեցիները կը պահուին ընդհանրապէս այնպիսի հայերու կողմէ, որոնք հայախօս չեն: Անիկա հրաշալի պատկեր մը կրնայ նկատուիլ, եթէ նայինք ազգային ինքնութեան ու ազգային ժառանգութեան պահպանումի տեսանկիւնէն: Բայց ասիկա կաղացող պատկեր մը կը դառնայ, եթէ նայինք մայրենի լեզուով սնուցուած հայասիրութեան ու ինքնաճանաչումի տեսանկիւնէն: Որովհետեւ կայ շատ դառն ճշմարտութիւն մը, զոր շատեր չեն տեսներ: Առանձինս ազգասիրութիւնը բաւարար չէ ազգային գոյատեւման հարցին մէջ:

ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃԵԱՆ, խմբագիր՝ «Մարմարա» թերթի (Պոլիս)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐՈՒ ԿԱՌՈՅՑ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԵՐԱԿԱՆՁՆԵ ԻՐ ԲՈՒՈՐ ԿՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ
Համազգայինի կտակներուն եւ հիմնադրամներուն մեծ մասը արտասովոր պայմաններու բերումով օգտագործուեցաւ: Լիբանանի քաղաքացիական պատերազմի տասնհինգ տարիներուն ընթացքին՝ ապահովելու համար կրթական եւ մշակութային հաստատութիւններու եւ ծրագիրներու գոյատեւումը: Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը այժմ յաջողած է ամբողջութեամբ վերականգնել իր բոլոր կտակներուն եւ հիմնադրամներուն գումարները:

Կեդրոնական Վարչութեան կողմէ հիմնադրամներու կառոյցին վերականգնումը 2011-ին կը միտի սատարել Համազգայինի ծրագիրներու իրագործման, հայեցի դաստիարակութեան եւ հայ մշակոյթի ու լեզուի տարածման:

ԿԸ ԿԱԶՄՈՒԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐՈՒ ԿԱՌՈՅՑԻ ՍԱՐՄԻՆԸ

Մարմնին պարտականութիւնն է.

- ա. Շահարկել գոյութիւն ունեցող գումարները:
- բ. Ապահովել նոր հիմնադրամներ եւ նուիրատուութիւններ:
- գ. Հսկել հիմնադրամներու անձեռնմխելիութեան եւ զանոնք տրամադրել սահմանուած նպատակներուն:

Մարմինը կը հիմնէ **Hamazkayin Armenian Educational and Cultural Endowment Fund**-ը.

արձանագրուած է Մ. Նահանգներու մէջ իբրեւ ոչ հասութեաբեր կառոյց եւ ենթակայ է երկրին օրէնսդրութեան:

ԿՏԱԿՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Նիկոլ Աղբալեան կտակ, Պաստրմաճեան հիմնադրամ. հրատարակչական նպատակներ:

Մայք Գալայճեան, Խաչիկ Իսրայելեան, Աւագանեան, Պահատուր կտակներ, Հրաչ Դարբինեան հիմնադրամ.

Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի սաներու ֆոնտ:

Բժ. Լեւոն Գրիգորեան հիմնադրամ, Սուրեն եւ Հրայր Սարգիսեան հիմնադրամ. հայագիտական կրթութիւն:

Բժ. Պետրոս եւ Յովակիմ Դարբինեան հիմնադրամ. գրական եւ մանկավարժական ծրագիրներ:

Աստղիկ Ալեքսանտրեան հիմնադրամ. դասագիրքերու հրատարակութիւն:

Գեորգ Կոբարեան հիմնադրամ. հայերէն լեզուի դասագիրքերու հրատարակութիւն:

Համազգայինի Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի հիմնադրամ. հայերէն դասագիրքերու հրատարակութիւն:

Մազմանեան կտակ. Համազգայինի տպարանի կարիքներ:

ԱԶԳԱՅԻՆՆԵՐՈՒ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶՈՎ ՊԱՅ ԴՐՈՒՄԸ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Բժ. Սամուէլ Սեմերճեան հիմնադրամ. բժշկագիտական կրթութիւն:

Նուարդ Ասատուրեան հիմնադրամ. Համազգայինի ընդհանուր ծրագիրներ:

Հայ Կրթական Հիմնարկութեան հիմնադրամ. Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի սաներու ֆոնտ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎՍԱԶՅՈՒՄԸ ՆՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Սկրտիչ եւ Քնար Գարագաշեան, Չոհրապ Պոսնոյեան հիմնադրամներ.

Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի կրթական կարիքներուն յատուկ:

ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ 2011-Ի ԵԿԱՄՈՒՏՆԵՐԷՆ

Բժ. Սամուէլ Սեմերճեան հիմնադրամ (բժշկագիտական կրթութիւն).

ԱՄՆ 1500 տոլար՝ հիւանդանոցի տարրալուծարանի գիտութիւն ուսանող ճեմարանաւարտի մը:

Սկրտիչ եւ Քնար Գարագաշեան հիմնադրամ (ճեմարան).

ԱՄՆ 2500 տոլար՝ Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի սաներու ֆոնտին:

Չոհրապ Պոսնոյեան հիմնադրամ (ճեմարանի եւ ճեմարանականներու համալսարանի կրթանպաստ).

ԱՄՆ 2000 տոլար՝ Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի սաներու ֆոնտին:

ԱՄՆ 2000 տոլար՝ Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանէն համալսարանի առաջին տարուան 2 ուսանողներու:

Պաստրմաճեան, Մազմանեան եւ Համազգայինի Հրատարակչական հիմնադրամներ.

ԱՄՆ 6000 տոլար Համազգայինի Հրատարակչականին՝

Օրհան Փամուքի «Զիւնը» գիրքին Մեսրոպեան ուղղագրութեամբ հրատարակութեան համար

եւ Հայաստանի երիտասարդ գրագետներու «18-33 Անթոլոկիա» ծաղկաքաղին:


Սկրտիչ եւ Ազնի Սարգիսեան հիմնադրամ (հայագիտական կրթութիւն).

ԱՄՆ 3000 տոլար՝ Հալեպի Հայագիտական հիմնարկին:








ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԾՐՁԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱԾԻՂՆԵՐ





- | | | | | | | |
|---|--|--|---|------------------------------------|--|--|
| ԱՐԵՎԵԼԵԱՆ ԱՄԵՐԻԿԱ
Նիւ Եորք
Պոսթըն
Նիւ Ճըրզի
Ֆիլատելֆիա
Տիթոնյթ
Ուաշինկթըն
Շիքակօ
Փրովիտընս | ԼԻԲԱՆԱՆ
Արեւմտ. Պեյրութ
Պուրճ Համուտ
Անթիլիաս
Էշրեֆիե
Այնճար | ՔԱՆԱՏԱ
Մոնրեալ
Զեյմպրիճ
Թորոնթօ
Վանքուվըր | ՅՈՒՆԱՍՏԱՆ
Աթէնք
Թեսալոնիկէ | ԱՄՏՐԱԿԻԱ
Մելպոն
Սիտնի | ՍՈՒՐԻԱ
Դամասկոս
Հալէպ
Գամիշլի
Զեսապ | ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱ
Լոս Անճելըս
Ս. Ֆ. Վալի
Լա Զրեշենթա
Փասատիլա
Կլենտէյլ
Օրլընճ Զաուկթի
Սան Ֆրանսիսքօ
Ֆրեզնօ |
|---|--|--|---|------------------------------------|--|--|





ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ



HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY

M. & H. Arslanian College
P.O.Box: 70-1028 Antelias, Lebanon
Tel: +961 4 715684 - Fax: +961 4 715692
e-mail: central@hamazkayin.com www.hamazkayin.com